

ՏԵՍԱԿԵՏ

ՕՐՈՒԱՆ ԸԱՐՑՐՈՒՆ ԸՆՏ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՐԿՂԻՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Ամերիկայի Միացեալ Նահանգները ծանօթ է որպէս ազատութիւններու, մարդկային իրաւունքներու եւ ժողովրդավարական սկզբունքներու պաշտպան երկիր, որ կը ձգտի նաեւ այդ սկզբունքները տարածել այլ երկիրներ՝ օգտագործելով հարուստ եւ գերհզօր պետութիւն ըլլալու իր հանգամանքը:

Ճիշդ է որ, իր սահմաններէն ներս Միացեալ Նահանգները կը կիրառէ այն բոլոր ժողովրդավարական համոզմունքները, որոնց վրայ հիմնուած է այս երկիրը: Սակայն, իր հաւատացած սկզբունքները այլ երկիրներ տարածելու ուղղութեամբ, Ամերիկա տասնամեակներու ընթացքին մասնուած է ձախողութեան, իր վարած երկու չափ, երկու կշիռի երկրորդ քաղաքականութեան պատճառաւ:

Պաղ պատերազմի տարիներուն Միացեալ Նահանգները պաշտպանած է Հարաւային Ամերիկայի գինուորական խունթաները, որոնք ոչ միայն կը բռնաբարէին իրենց ժողովուրդներու տարրական իրաւունքները, այլ նաեւ զանգուածային սպանութիւններու միջոցաւ կը ձգձգէին իրենց քաղաքական հակառակորդները: Նոյն եղած է պարագան Յունաստանի, Պարսկաստանի, Ռուսիայի, Թուրքիոյ եւ բազմաթիւ այլ երկիրներու մէջ, ուր Ամերիկան գործած է՝ «Եթէ բռնապետը մերն է, ընդունելի է» սկզբունքով: Այս պատճառաւ ալ աշխարհի տարածքին շատեր թերահաւատութեամբ կը մօտենան Ամերիկայի անկեղծութեան:

Նոյն ընթացքը կը շարունակուի նաեւ այս օրերուն: Ամերիկայի արտաքին քաղաքականութիւնը միշտ պատրաստ է աչք փակելու այլ երկիրներու իշխանաւորներու հակաժողովրդավարական արարքներուն, եթէ անոնք պատրաստակամութիւն չայտնեն ենթարկուելու իր թելադրանքներուն:

Այս քաղաքականութեան ցայտուն մէկ օրինակը կը հանդիսանայ Հայաստանի իշխանութիւններուն նկատմամբ Միացեալ Նահանգներու դրսեւորումներով:

Անցեալ Հինգշաբթի օր, Պետական Գրասենեակը հրապարակեց իր տարեկան զեկույցը՝ «Մարդու իրաւունքները 2009 թուականին» խորագրին տակ, ուր կը ներկայացուի ազատութիւններու վիճակը աշխարհի տարբեր երկիրներուն մէջ: Զեկույցի հրապարակումը Ամերիկեան օրէնքի պահանջն է եւ ամէն տարի պէտք է ներկայացուի Գոնկրէսին:

Զեկույցը խիստ գնահատականներ կու տայ Հայաստանի այսօրուայ իշխանութիւններու վարած ներքին քաղաքականութեան: Ըստ Ամերիկեան կառավարութեան, Հայաստանի իշխանութիւնները կեղծած են ընտրութիւններ, հետապնդած են քաղաքական ընդդիմախօսներուն, կամայական ձերբակալութիւններ կատարած են, մարդիկ երկար ժամանակով պահուած են նախնական կալանքի պայմաններուն տակ, կիրառուած են ընդդիմախօսներուն ահաբեկելու եւ անոնցմէ վրէժ լուծելու գործելակերպ, ուժ գործադրած

են քաղաքական ցոյցերու մասնակիցներու դէմ, ոստիկանները ծեծի ենթարկած են ձերբակալուածներուն, ամբաստանեալներուն զրկած են արդար դատավարութեան հնարաւորութենէն, սահմանափակուած է մամուլի բազմակարծութիւնը: Այս բոլորը ու աւելին արձանագրուած է զեկույցի Հայաստանի վերաբերող բաժնին մէջ:

Զարմանալի գուզադիպութեամբ մը սակայն, Զեկույցի հրապարակման նոյն օրն իսկ, Պետական Քարտուղար Հիլըրի Բլինթըն հեռաձայնած է Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեանին ու զինք հրաւիրած՝ Ուաշինկթըն մասնակցելու համար Նախագահ Օպամայի կազմակերպած Միջուկային Անվտանգութեան Գազաթաժողովին:

Այսպիսով կարծէք Տիկ. Բլինթըն կ'ուզէ ըսել Սերժ Սարգսեանին, որ ուշադրութիւն մի դարձնէք քիչ առաջ մեր հրապարակած զեկույցին ու անտեսցէք ձեր հասցէին ըստաւանները: Միաժամանակ, Միացեալ Նահանգները ծիծաղելի կը դարձնէ մարդկային իրաւունքներու ջատագով որպէս ներկայանալու իր յաւակնութիւնները ու կ'արժէքազրկէ իր իսկ պատրաստած զեկույցի բովանդակութիւնը:

Հայաստանի ժողովուրդի մեծամասնութիւնը, շնորհիւ ինքնագրաքնութեան ենթարկուող հեռատեսիլի ալիքներուն, տեղեակ անգամ չդարձաւ Ամերիկայի կառավարութեան, իր իշխանութիւններու հասցէին կատարուած գնահատականներուն: Իսկ, Հիլըրի Բլինթընի հեռաձայնային խօսակցութիւնը եւ Սերժ Սարգսեանի ուղղուած հրաւերը ներկայացուցեցաւ որպէս առաջնորդող լուր եւ բարենիշ՝ Հայաստանի իշխանութիւններուն:

Ամերիկայի նման պահուածքը յատուկ չէ անշուշտ միայն Հայաստանին: Ատրպէյճան, ուր վիճակը շատ աւելի վատ է քան Հայաստանի մէջ, նոյն վերաբերմունքին կ'արժանանայ: Տակաւին վերջերս «Ուաշինկթըն Փոստ» թերթը այս մասին հարց կու տար՝ «Որո՞ւ հետ բարեկամութիւն կ'ընէ Միացեալ Նահանգները»:

Միացեալ Նահանգները կովկասի տարածաշրջանէն ներս իր քաղաքականութիւնը առաջ մղելու առումով չի կրնար ապաւինիլ կասկածելի ընտրութիւններու միջոցաւ պաշտօնի եկած իշխանաւորներու վրայ: Ե՛ւ դարբաբողեան հարցը եւ Հայ-Թուրք յարաբերութիւնները կրնան լուծուիլ միայն իր ժողովուրդի վստահութեան արժանացած ու անոնց նեցուկը վայելող իշխանութիւններու միջոցաւ:

Միացեալ Նահանգները հաւատարիմ մնալով իր դաւանած սկզբունքներուն ու օգտագործելով իր միջազգային հեղինակութիւնը պարտաւոր է նախ եւ առաջ Հայաստանի իշխանութիւններէն պահանջել արձանագրուած թերութիւններու վերացումը եւ իսկական բարեփոխումներու իրագործումը: Այդ է միակ ճանապարհը՝ հարցերու լուծման գծով: Մնացեալը ժամավաճառութիւն է:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՑՆՑՈՒՄ Է

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանի տնտեսութիւնը ցնցուած է հիմնաւոր: Փետրուարին արժեզրկման հրապարակուած ցուցանիշը՝ 9,4 տոկոս, ցնցել է բոլորին. ֆինանսական պատասխանատուներն ասում են, թէ պէտք չէ սպասել երկնիշ արժեզրկման, իսկ դա նշանակում է, որ կը լինի երկնիշ արժեզրկում: Աճել է նաեւ դոլարը՝ 390 դրամից աւել մէկ դոլարի դիմաց, անցնելով 380-ի սահմանը, որ որոշուել էր անցեալ տարուայ Մարտին, դրամի բացթողումից յետոյ: Փետրուարին դոլարը թանկացաւ 0,7 տոկոսով եւ շարունակուած է աճել, ինչը տնտեսագէտներին թոյլ է տուել Մարտամիսն անուանել շոկային արժեզրկման ամիս:

Այս տարուայ Յունուար-Փետրուարին, անցեալ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ, սննդամթերքը թանկացել է 5,1 տոկոսով, հագուստն ու կոշիկը՝ 10 տոկոսով, իսկ ծառայութիւնները՝ 10,4 տոկոսով: Մթերքից ամենաշատը թանկացել է միսը՝ 8,8, ձկնեղէնը՝ 60,3 տոկոսով: 34,8 տոկոսով աճել է շաքարաւազի գինը: Կենտրոնական բանկը երկու ամսուայ ընթացքում երեք անգամ բարձրացրել է վերաֆինանսաւորման տոկոսը, այն հասցնելով 6,5-ի:

Հայաստանում գազի թանկացումը 4 հոգուց բաղկացած ընտանիքի ամսական ծախսը կ'աւելացնի 2500 դրամով: Այդ մասին չաչտարարել է Աժ սոցիալական հարցերի յանձնաժողովի նախագահ Յակոբ Յակոբեանը: Նրա խօսքով, ներկայում պետութիւնն ուսումնասիրուած է նիւթական փոխհատուցման հնարաւորութիւնը:

Սա ամէնն է, ինչ անում է կառավարութիւնը, զսպելու գնաճը եւ պահպանելու սոցիալական կայունութիւնը: Չնայած այն բանին, որ թէ տեղական, թէ միջազգային փորձագէտները պնդում են, որ իրավիճակը շոկելու համար կառավարութեան քաղաքականութեան թիրախը պէտք է լինի մոնոպոլ բիզնեսը, վերջինս բարգաւաճում եւ զիրանում է: Կա եւս մէկ խնդիր. ինչպէս գրում է բրիտանական Թայմսը, Հայաստանի տնտեսութիւնը գրեթէ ամբողջութեամբ պատկանում է ռուսական ընկերութիւններին՝ ինչպէս է ներգետնի, այնպէս էլ կապի ու տրանսպորտի ոլորտներում:

«Ազգային անվտանգութեանը սպառնալիքները փոխուել են: Առաջինն նոր սպառնալիքը ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի միւս երկրների համար տնտեսական ճգնաժամն է, որը ցոյց տուեց ազգային անվտանգութիւն հասկացութեան իմաստի տրանսֆորմացիան», յայտարարել է Ռիչարդ Կիրակոսեանը:

Սպառողների իրաւունքների պաշտպանութիւն կազմակերպութիւնը մտադիր չէ համագործակցել Հայ ազգային կոնգրէսի հետ, յայտարարել է այդ կազմակերպութեան նախագահ Աբգար Եղոյեանը: Նա նշել է, թէ ձգտում են հեռու մնալ քաղաքական կուսակցութիւններից:

Ինքը՝ Կոնգրէսը հաւատարիմ է մնում "բուստ" եւ "յեղափոխութիւն" եզրերը չօգտագործելու քաղաքականութեանը: Մարտի 1-ի հանրահաւաքում Լեւոն Տէր-Պետրոսեանը չչաչտարարեց Կոնգրէսի պատրաստակամութիւնը՝ գլխաւոր

րելու սոցիալական բողոքները, եղան միայն մի քանի քայլեր բնակչութեան շահերը պաշտպանելու ուղղութեամբ:

Իրավիճակը Հայաստանում սկսում է լիշեցնել Յունաստանը, որտեղ ներկայում բողոքի ալցիաներ են տեղի ունենում: Ինչպէս Հայաստանում, Պապանդրեուի կառավարութիւնը մտադիր չէ ընդունել սեփական անկարողութիւնը՝ երկիրը դուրս բերելու ճգնաժամից եւ տեղ տալու այլ ուժերի:

Յունաստանին արդէն առաջարկում են վաճառել իր տարածքի մի մասը, պատմական արժէքները եւ արուեստի գործերը փակելու համար պետական պարտքը, գերմանացի գործիչների կարծիքն է մէջբերում բրիտանական The Guardian-ը:

Սակայն, երկու տարբերութիւն կա Հայաստանի ու Յունաստանի միջեւ: Առաջին, Յունաստանը եւրամիութեան անդամ է, եւ ինչ էլ լինի՝ նրան թոյլ չեն տա խորտակուել, նա շրջապատուած չէ ոչ բարեկամ երկրներով:

Եւ երկրորդ, ինչպէս ասել է Հիլարի Բլինթոնը, Յունաստանը ժողովրդավարութեան հայրենիքն է, նա նոյնիսկ կատակել է, որ Աթէնքը կարող է հեղինակային իրաւունքով լիցենզաւորել դեմոկրատական գործընթացները այլ երկրներում: Այդ պատճառով էլ, անկիւնում դրուելու է առանձին մարդու շահը: Մեզանում ամէն ինչ տեղի է ունենում այդ շահի հաշուին:

Ես տնտեսագէտ չեմ, բայց ես պէտք է իմանամ, թէ որն է իմ շահը պետական քաղաքականութեան մէջ, պէտք է իմանամ, թէ ուր են տանում երկիրը, չխօսելով արդէն այն մասին, որ մենք ընտրենք մեր ճանապարհը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՏՏՕՏԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Երջամի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ՂԱԲՐԻԷՆ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ ԿԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ Դեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԲԱՐԳԱՎԱԾ ԶԱՅԱՍՏԱՆ»-Ի ԱՌԱՋՆՈՐԴ ԲՆԱԴԱՏՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ

Իշխող կոալիցիային մաս կազմող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ, կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար, երկրի ամենախոշոր գործարարներից Գագիկ Մառուկեանը Մարտ 15-ին լրագրողների հետ զրույցում կրկին քննադատության ենթարկեց կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացուցած հարկային փոփոխությունների փաթեթը, որը, չի շեղանք, խորհրդարանը առաջին ընթերցմամբ ընդունել է անցած քառօրեայի ընթացքում:



Գագիկ Մառուկեան կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

«Այսօր տնտեսական ճգնաժամ է, ճգնաժամը աւարտուած է: Պէտք է մենք կարողանանք, որ հարկերը ոչ թէ խասացուեն, այլ թուլացուեն, որոշ օրէնքներ սառեցուեն», - ասաց Մառուկեանը՝ շարունակելով. - «Դա աշխարհով մէկ ընդունուած կարգ է՝ տնտեսական ճգնաժամի ժամանակ պէտք է օրէնքներ սառեցուեն, որ կարողանայ ժողովուրդը գոյատեւել, կարողանանք այս ծանր պայմաններին միասնական ուժերով դուրս գալ»:

Խօսելով ճգնաժամի մասին՝ նա նշեց. - «Այսօր աշխարհով մէկ ոչ մէկը չի ասել, որ, ասենք թէ՛ տնտեսական ճգնաժամը աւարտուած է: Հնարաւոր է, որ տնտեսական ճգնաժամի երկրորդ փուլ լինի: Անգամ այն պետութիւնները, որոնք անկման փոխարէն 4 տոկոս, 6 տոկոս աճ են ունեցել, նրանք չեն համարձակուած այդպիսի բան ասել»:

«Ազատութիւն» ռադիոկայանի դիտարկմանը, թէ էկոնոմիկայի նախարար Ներսէս Երիցեանը ասել է, թէ երկիրը պատուով դուրս է եկել տնտեսական ճգնաժամից, Գագիկ Մառուկեանը հակադարձեց. - «Տեղում չի եղել ու չի տիրապետում ո՛չ երկրի էկոնոմիկային, ո՛չ էլ երկրի տնտեսական վիճակին»:

Հարցին, թէ իր կարծիքը փոխանցե՞լ է նախագահ Սերժ Սարգսեանին, «Բարգավաճ Հայաստան»-ի առաջնորդը արձագանքեց. - «Երկրի նախագահը գիտի եւ համապատասխան քայլեր ինքը կատարում է: Ամէն ինչ չի կարելի երկրի նախագահի վրայ թողնել»:

Ի պատասխան Գագիկ Մառուկեանի կողմից հնչեցուած գնահատականների՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսէս Երիցեանը փոխանցել է. «Խորհուրդ ենք տալիս, որ Գագիկ Մառուկեանը գնահատական տայ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ նախարարներին եւ նրանց գործունէութեանը, իսկ իմ աշխատանքի գնահատականը կը տան Հայաստանի Հանրապետութեան նախագահն ու վարչապետը»:

«Ճիշդ է եւ կոռեկտ է հրապարակաւ գործընկերոջ թերութիւնները ներկայացնելը, նման նկատողութիւնները կամ թերութիւնները կարելի է կոալիցիայի նիստի ժամանակ մասնանշել», - Haynews.am-ի հետ զրույցում ասաց ՀՀԿ մամուլի խօսնակ Էդուարդ Շարմազանովը: «Կառավարութիւնում իմը, քոնը չպիտի լինի. Կոալիցիայի 3 կուսակցութիւնները պէտք է միասնական լինեն, համախմբուեն Նախագահի շուրջ, ոչ թէ մէկը միւսի վերմակը քաշի», - ասաց իշխող կուսակցության մամուլի խօսնակը:

«ՕՐԻՆԱՅ ԵՐԿԻՐ»-Ը ՓՈԽՈՒՄ Է ԻՐ ԵՐԿՈՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ

Սերժ Սարգսեանի՝ Մարտ 15-ին ստորագրած հրամանագրերով Մանուկ Վարդանեանը նշանակուել է Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար՝ ազատուելով ՀՀ նախագահի խորհրդականի պաշտօնից, իսկ Արմէն Երիցեանը՝ Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարար՝ ազատուելով ՀՀ կառավարութեանն առընթեր ոստիկանութեան պետի առաջին տեղակալի պաշտօնից:

Նախագահի՝ նոյն օրը ստորագրած այլ հրամանագրերով Մհեր Ծահգեղեանը եւ Գուրգէն Սարգսեանը ազատուել են համապատասխանաբար ՀՀ արտակարգ իրավիճակների եւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարների պաշտօններից:

«Օրինաց երկիր» կուսակցութիւնը կոալիցիոն համաձայնագրով իրեն վերապահուած նախարարութիւնների ղեկավարների փոփոխութեան մասին որոշումը, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին երկուշաբթի օրը ասաց կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար Հեղինէ Բիշարեանը, կայացրել է շաբաթ օրը՝ քաղխորհրդի նիստում՝ «ելնելով քաղաքական մարտավարութիւնից եւ ռազմավարութիւնից»:

Կուսակցութեան փոխնախագահ Մհեր Ծահգեղեանը, ըստ Բիշարեանի, ուժեղացնել է կուսակցութեան քաղաքական աշխատանքները, իսկ Գուրգէն Սարգսեանը զբաղուելու է կուսակցութեան տնտեսական հարցերով:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ արդե՞օք այդ քայլով կուսակցութիւնը պատրաստուած է գալիք ընտրութիւններին, Հեղինէ Բիշարեանը դրական պատասխանեց, աւելացնելով, որ իրենք գոհ են նախարարներից, այդ քայլով պարզապէս իրականացնում են կուսակցութեան մարտավարութիւնը եւ ռազմավարութիւնը:

Արտակարգ իրավիճակների նախարարի պաշտօնում «Օրինաց երկիր»-ը հանրապետութեան նախագահին ներկայացրել էր Ոստիկանութեան պետի տեղակալ Արմէն Երիցեանի, տրանսպորտի եւ կապի նախարարի պաշտօնում՝ ներկայումս նախագահի խորհրդական Մանուկ Վարդանեանի թեկնածութիւնները. Երիցեանը եւ Վարդանեանը նախօրէին դարձել են կուսակցութեան անդամներ:

ՀԱԿ-Ի ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԻՆ ԵՐԱՆՈՐՅՐԴԻ ԶԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ



ՀԱԿ-ի կողմնակիցներու ցայցը Երեւանի մէջ

Երեքշաբթի, Մարտ 16-ին ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրէսի (ՀԱԿ) ներկայացուցիչները, բազմամարդ էրթով անցնելով Երեւանի կենտրոնական փողոցներով, Եւրախորհրդի հայաստանեան գրասենեակ յանձնեցին ՀԱԿ-ի առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ստորագրութեամբ նամակն ու երկիրը ճգնաժամից դուրս բերելու ծրագիրը՝ հասցեագրուած Եւրախորհրդի գլխաւոր քարտուղար Թորբեօն Եագլանդին:

հետեւողական է վեհաժողովի բանաձեւերի կատարմանը», ընդդիմութիւնը նաեւ յոյս է յայտնում, որ Եագլանդը կ'օգտագործի ի պաշտօնէ իրեն ընձեռուած հնարաւորութիւններն ու իր անձնական ազդեցութիւնը՝ «ապահովելու, որ պէսզի Կոնգրէսի առաջարկները «ԵՆԽՎ-ի» Մոնիտորինգի յանձնաժողովի նիստի քննարկումների մաս կազմեն»:

Նամակում, գոհունակութիւն արտայայտելով, որ Եւրախորհուրդը «շարունակում է հետեւել Հայաստանում տիրող իրավիճակին,

«Վստահ ենք, որ այն, ինչ նրանք «Իշխանութիւնները» ներկայացնելու են, լինելու է չեղած բարեփոխումների, դատարկ խոստումների մի ցուցակ», - յայտարարեց ընդդիմադիրների երթը գլխաւորող ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեանը:

ՅԵՌՈՒՍՏՍԵՍԱՅԻՆ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԻ ՄՐՑՈՅԹԸ ՅՈՒԼԻՍԻ, ՈՐԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՆԱԵՒ «Ա1+»-Ը

Եւրոպայի Խորհրդի նախարարների կոմիտէն նոր որոշում է հրապարակել Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի կողմից «Ա1+»-ի գործով կայացրած վճռի կատարման մասին: Յիշեցնենք, որ ըստ այդ վճռի, ՀՀ կառավարութիւնը պէտք է մրցոյթ յայտարարէր եւ հնարաւորութիւն տար «Ա1+»-ին եթէր վերադառնալ:

Ըստ այդմ, Մարտի 4-ին վերստին քննելով 2008թ-ի Յունիսի 17-ին Եւրոպական դատարանի կայացրած վճռի կատարման ընթացքը՝ ԵՆ նախարարների կոմիտէի ներկայացուցիչները որոշել են՝ «Ընդունել ի գիտութիւն այն տեղեկատուութիւնը, որը ներկայացրել է Հայաստանի կառավարութիւնը՝ հաստատելով 2010 թուականի Յուլիսի մրցոյթի կայացումը, որին հնարաւորութիւն կ'ունենայ մասնակցել դիմումատու»:

Այս համատեքստում որոշման մէջ վերստին չի շեղուել են այն երաշխաւորութիւններն ու յայտարարութիւնները, որոնք ԵՆ նախարարների կոմիտէն ընդունել է խօսքի ազատութեան, լրատուամիջոցների բազմակարծութեան ու բազմազանութեան վերաբերեալ:

Նշենք, որ Հայաստանում կապուղիների մրցոյթները դադարեցուել էին 2 տարով՝ հեռուստաէթերի թուայնացման պատճառաբանութեամբ: Այդ երկու տարին լրանում է այս տարուայ Յուլիսին, որից յետոյ կրկին պէտք է կապուղիների մրցոյթներ անցկացուեն, այդ թւում նաեւ բոլոր այն կապուղիների համար, որոնցով հեռարձակուող հեռուստա-ընկերութիւնների լիցենզիաների ժամկէտն աւարտուել է:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՆՈՐ ՌԵԿՈՐԴՆԵՐ ԵՆ ՍԱՅՍԱՆՈՒՄ

Համաձայն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայութեան հրապարակած տուեանների՝ սպառողական գների ընդհանուր ցուցանիշը այս տարուայ Յունուար-Փետրուար ամիսներին՝ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատութեամբ կազմել է 108.2 տոկոս: Ընդ որում, գների աճ նկատուել է գրեթէ բոլոր պարանքների եւ վճարովի ծառայութիւնների դէպքում:

Պարենամթերքն ընդհանուր առմամբ թանկացել է 5.1 տոկոսով, հագուստն ու կօշկեղէնը՝ 10, իսկ վճարովի ծառայութիւնները՝ 10.4 տոկոս: Պարենամթերքի շարքում գների մեծ աճով առանձնանում են մսամթերքը՝ 8.8 տոկոս, ձկնամթերքը՝ 60.3 տոկոս, եւ այլն:

Բացառութիւն են միայն ձուն եւ ոչ ալկոհոլային խմիչքները, որոնց գները նուազուել են համապատասխանաբար 12.3 եւ 0.1 տոկոսով: Գրեթէ 1/3-ով (34.8 տոկոս) աճել է շաքարաւազի գինը, որը, ինչպէս յայտնի է, ներկրում է գործնականում մէկ ընկերութեան կողմից: Ի բարեբախտութիւն վնասակար սովորոյթների սիրահարների՝ ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գները կտրուկ չեն աճել՝ ընդամենը 1.6 տոկոսով:

ԼՈՒՐԵՐ

ԵԱՅԿ-Ի ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԶԱՄԱԿԱՐԳԻ ԹԵՐՈՒԹԻՆՆԵՐԻ ԿԵՐԱՑՄԱՆԸ

Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՂԿ) երեւանեան գրասենեակի ղեկավար Սերգէյ Կապինսոյը Մարտ 15-ին լրագրողներին հետ հանդիպմանը տեղեկացրեց, որ ԵԱՂԿ-ի ժողովրդավարական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի (ԺՀՄԻԳ)՝ Մարտի 8-ին հրապարակուած գեկոյցի առնչութեամբ իրենք մտադիր են Հայաստանի Սահմանադրական դատարանի, Արդարադատութեան նախարարութեան եւ Փաստաբանների պալատի հետ փորձագէտների մակարդակով աշխատանք տանել, որպէսզի վերացուեն հայաստանեան դատական համակարգում մատնանշուած թերութիւնները:

«Հայաստանում խնդիր է օրէնքի կիրառումը: Դա խնդիր է: Յաւոք սրտի, միշտ չէ, որ օրէնքը կիրառուում է», - յայտարարեց դեսպան Կապինսոյը՝ յաւելելով, թէ Հայաստանում օրէնքները կարող են կիրառուել այն դէպքում, երբ իրաւական, «դատական համակարգն աւելի կատարեալ լինի», երբ այն «յստակօրէն ամրագրի բոլոր խախտումները»:

Յիշեցնենք, որ ԺՀՄԻԳ-ի գեկոյցում ուղղակի նշուած էր, որ 2008 թուականի Մարտին տեղի ունեցած յետընտրական բռնութիւններին յաջորդած դատավարութիւնների ընթացքը բացայայտում է թերութիւններ Հայաստանի արդարադատութեան համակարգում, մասնաւորապէս՝ մի շարք դէպքերում խախտուել է անձի ազատութեան իրաւունքը, անմեղութեան կանխավարկածը, խոշտանգումների եւ ճնշումների են ենթարկուել ականատես վկաները, ցուցմունքներ են կորզուել ոչ օրինական միջոցներով:

Ասուլիսի ընթացքում Կապինսոյն անդրադարձաւ նաեւ 2008-ի մարտեան դէպքերի հետեւանքով ձերբակալուածներին: «Այդ մարդիկ մարտեան դէպքերի հետ կապուած դատապարտ-

ուածներ են: Եւ կրկին՝ միայն դատարանն է իրաւասու տալ կոնկրետ սահմանումներ», - ասաց նա, քիչ անց, այդուհանդերձ, աւելացնելով. - «Այս դէպքում ես կարող եմ յղում կատարել Հայաստանի օմբուդսմենի կողմից հնչեցրած գնահատականին: Ըստ նրա, համաներումը չպէտք է կրեր այդպիսի ընտրովի բնոյթ: Այս կարծիքը պէտք է հաշուի առնուի, բայց չպէտք է լինեն կամայական որոշումներ: Իրաւական դաշտում բոլոր որոշումները պէտք է հիմնուած լինեն օրէնքի վրայ: Եթէ օրէնքները կատարեալ չեն, ուրեմն պէտք է կատարելագործել դրանք, բայց չպէտք է լինի իրաւական նիհիլիզմ, որովհետեւ դա ճանապարհ է հարթում ամենայն կամայականութիւնների համար»:

Կապինսոյը ոչ հաստատեց, ոչ էլ հերքեց տեղեկութիւնը, որ օրերս, երբ Երեւանում էր ԵԱՂԿ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Խուան Ստարչը, վերջինս նկատողութիւն է արել իրեն, թէ իբր կազմակերպութեան երեւանեան գրասենեակը ոչ լիարժէք տեղեկութիւններ է հաղորդել խորհրդարանական վեհաժողովին՝ Հայաստանում առկայ իրավիճակի մասին:

«Դա նկատողութիւն չէր: Դա փաստի արձանագրում էր», - ասաց նա:

Սերգէյ Կապինսոյը փաստաթղթերի ծաւալի մեծութեամբ բացատրեց, թէ ինչու 2008 թուականի մարտեան դէպքերին յաջորդած դատավարութիւնների մոնիթորինգի մասին ԵԱՂԿ ԺՀՄԻԳ-ի գեկոյցը հրապարակուեց միայն այս տարուայ Մարտին:

Հայաստանեան ընդդիմութիւնը պնդում է, որ գեկոյցը պատրաստ էր աւելի վաղ, սակայն «ԺՀՄԻԳ-ի եւ Հայաստանի իշխանութիւնների միջեւ որոշակի պայմանաւորուածութեան» արդիւնքում հրապարակուել է «վերջին դատավարութեան աւարտից յետոյ»:

Ուաշինգտոնեան գազաթնաժողովին ծրագրում է մասնակցել նաեւ Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Թայիփ էրդողանը: Մարտի 4-ին ԱՄՆ-ի Կոնգրէսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի կողմից Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի ընդունումից հետո, էրդողանը նշել էր, թէ Թուրքիան հանդէս է գալու «համարժէք պատասխանով»:

Թուրքական որոշ աղբիւրների պնդմամբ, «համարժէք պատասխան» ասելով, Անկարայում նկատի ունեն ամերիկացի եւ թուրք պաշտօնեաների փոխադարձացների դադարեցումը՝ չբացառելով, որ վարչապետ էրդողանը հրաժարուի ապրիլին Ուաշինգտոն մեկնելու մտադրութիւնից:

ԶԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԵՑ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ԶԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈՅ ՊԱՏՐԻԱՐԸ



Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Պատրիարքը Երեւանի «Ձուարթնոց» օդակայանի մէջ ժամանման պահուն

Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի հրաւերով Երեքշաբթի, Մարտ 16-ին Հայաստան ժամանեց Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Պատրիարքը: Ռուսիոյ պատրիարքին «Ձուարթնոց» օդանավակայանում դիմաւորեց Վեհափառ հայրապետ՝ Հայ Առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների պատուիրակութեամբ:

Կիրիլ Պատրիարքի Հայաստան կատարած առաջին պաշտօնական եւ օրեայ այցի շրջանակներում նախատեսուած են ամենատարբեր միջոցառումներ: Պատրիարքի ժամանումից յետոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայացաւ Հրաշափառի եւ Բարիգալստեան արարողութիւն: Այնուհետեւ Ռուսիոյ պատրիարք Կիրիլը Էջմիածնից մեկնեց Օշական՝ ծաղկեպսակ դնելու 1928 թուականի Ռուս - պարսկական պատերազմում զոհուած ռուս զինուորների յուշակոթողին:

Մարտի 18-ին՝ իր այցի վերջին օրը, Ռուսիոյ պատրիարքը կը մասնակցի Երեւանում ռուս ուղղափառ նոր եկեղեցու հիմնարկէքի արարողութեանը եւ իր իսկ հեղինակած գրքերի հայերէն թարգմանութիւնների շնորհանդէսին:

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՑԸ

Շարունակուած էջ 1-էն

ուումը՝ մայրաքաղաք Երեւանի աւազանի ընտրութիւններուն», - ըսուած է Պետական գրասենեակի հրապարակած հեղինակաւոր գեկոյցին մէջ, աւելցնելով. - «2009-ի ընթացքին իշխանութիւնները հետապնդած են քաղաքական ընդդիմախօսներուն, կամայական ձերբակալութիւններ կատարած են, մարդիկ երկար ժամանակով պահուած են նախնական կալանքի պայմաններուն տակ, կիրառուած են ընդդիմախօսներն ահաբեկելու եւ անոնցմէ վրէժ լուծելու գործելակերպ»:

«Իշխանութիւնները ուժ գործադրած են քաղաքական ցոյցերու մասնակիցներու դէմ, եւ խափանած են այդ մասին տեղեկատուութիւն տարածելու քաղաքացիներու փորձերը», - ըսուած է գեկոյցի Հայաստանի վերաբերող բաժնին մէջ: - «Ոստիկանները ծեծի ենթարկած են ձերբակալուածները, Ազգային Անվտանգութեան Ծառայութեան գործակալներու եւ ոստիկաններու կողմէ մարդոց իրաւունքները խախտելու դէպքերը մնացած են անպատիժ: Ամբաստանաւորութեան հնարաւորութենէն»:

Զեկոյցին մէջ կայ անդրադարձ գանգուածային լրատուամիջոցներու աշխատանքին. - «Ձանգուածային լրատուամիջոցներու եւ յատկապէս հեռարձակուող լրատ-

ուամիջոցներուն բնորոշ է ինքնագրաքննութեան բարձր աստիճան: Իշխանութիւնները կը սահմանափակեն մամուլի բազմակարծութիւնը, որու վկայութիւններէն մէկը հեռարձակման արտօնագրերու տրամադրման սառեցումն է: Գրանցուած են լրագրողներու վրայ յարձակումներու նոր դէպքեր»:

Զեկոյցին մէջ կ'ըսուի, որ հայաստանեան իշխանութիւնները սահմանափակած են ժողովներու եւ հաւաքներու ազատութիւնը, ճշդուած վայրերու մէջ ցոյցեր կազմակերպելու քաղաքական ընդդիմութեան դիմումները բազմիցս մերժուած են, իշխանութիւնները միջամտած են ցրուած են մարդոց ինքնաբուխ հաւաքները:

«Հայաստանի մէջ լուրջ խնդիր կը մնայ համատարած կոռուպցիան, եւ իշխանութիւնները չեն դիմեր վճռական քայլերու, գայն չաղթահարելու համար», - ըսած են գեկոյցի հեղինակները:

Ներկայացնելով ամբողջ գեկոյցը, ԱՄՆ-ի Պետական Քարտուղարուհի Հիլըրի Քլինթոն յայտնած է, որ այժմ կայ մէկ մտահոգիչ միտում ամբողջ աշխարհի մէջ: «Մարդու իրաւունքներու պաշտպանութեան առաքելութիւն կատարող հասարակական կազմակերպութիւններու վրայ նորանոր եւ աւելի սահմանափակումներ իրականացնող կառավարութիւններու թիւը ներկայիս հետզհետէ կ'աճի», - ըսած է Տիկ. Քլինթոն:

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ԶՐԱԻՐԵԼ Է ՌԻԱՇԻՆԳՏՈՆ

Ուրբաթ, Մարտ 12-ին տեղի է ունեցել Սերժ Սարգսեանի հեռախօսագրոյցը Միացեալ Նահանգների պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ:

Հայաստանի նախագահի մամուլի գրասենեակի փոխանցմամբ, ամերիկեան կողմի նախաձեռնութեամբ տեղի ունեցած հեռախօսագրոյցի ընթացքում Հիլարի Քլինթոնը Սերժ Սարգսեանին է փոխանցել նախագահ Բարաք Օբամայի կողմից նախաձեռնուած եւ սոցն թուականի Ապրիլի կէսերին Ուաշինգտոնում կայանալիք Գլոբալ միջուկային անվտանգութեան գազաթափոխման մասնակցութեան հրաւերը՝ յոյս յայտնելով, որ կողմերը Ուաշինգտոնում կը շարունակեն երկկողմ, տարածաշրջանային ու միջազգային օրակարգի հարցերի քննարկումը:

ՍԴՅԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԶԱՄԱՁԱՅՆ

Շարունակուած էջ 1-էն

Խօսելով Մարտ 1-ի իրադարձութիւններու մասին ՄԴԿ ներկայացուցիչը յայտնեց որ Մարտ 1-

ով իշխանութիւնների տակ ալան դրուեցաւ: Պատասխանելով լրագրողներու մէկի հարցին, Շիրխանեան ըսաւ. «Մարտի 1-ի համար գլխաւոր պատասխանատու եմ հա-

մարում Ռոբերդ Քոչարեանին, ով այդ քայլով իրեն փոխարինող իշխանութիւնների տակ ալան տեղադրեց»: Ան աւելցուց, որ Մարտի 1-ին խախտուեցաւ եւ ՀՀ սահմա-

նադրութիւնը, եւ պաշտպանութեան մասին օրէնքը, որոնք կ'արգիլեն ներքաղաքական խնդիրներու մէջ զինուած ուժերու օգտագործումը:

ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՐԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ ՈՒԱԼԻՏ ԳԱՄՊԼԱԹ ՍՈՒՐԻԱ Կ'ԱՅՅԵԼԷ

Լիբանանի Յառաջդիմական-Սոցիալիստ Կուսակցության նախագահ եւ երեսփոխան Ուալիտ Ճամպլաթ իր երբեմնի կեցուածքը փոխած ըլլալով Սուրիոյ նկատմամբ շատ հաւանաբար մօտ ատենէն Դամասկոս այցելէ: Այս յայտարարութիւնը կատարեց Լիբանանի Հրգպալլահ Կուսակցութեան նախագահ Շէյխ Հասան Նասրալլա: Կ'ըսուի թէ Ճամպլաթ ներողութիւն խնդրած է սուրիացիներէն, իր կարգ մը ծայրայեղ արտայայտութիւններուն համար:

«Թաուհիտ» հոսանքի պետ Ուհիսամ Ուահապ յայտարարեց, թէ Ճամպլաթ պիտի դիմաւորուի ընդունելութեան պաշտօնական կարգով: Ուահապ ընդգծեց, թէ Սուրիա պայմաններ չէ դրած Ճամպլաթի առջեւ: Վերջինս պարզապէս զգացած է Սուրիոյ հանդէպ իր սխալ մօտեցումները եւ ներկայիս կը փորձէ սրբագրել այդ սխալները: Միւս կողմէ, սակայն, լիբանանեան «Ալ Տիար» օրաթերթը կը գրէ, թէ Ուալիտ Ճամպլաթ իր զայրոյթը սկսած է արտայայտել՝ Դամասկոս կատարելիք այցելութեան մասին կատարուող մեկնաբանութիւններէն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏՅԱՐԻՐԻ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՉ



Անցնող օրերու ընթացքին Լիբանանի վարչապետ Սաստ Հարիրի պաշտօնական այցելութեամբ Գերմանիա կը գտնուէր: Ան հանդիպում ունեցաւ Դաշնակցային Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերգելի հետ եւ միատեղ քննարկեցին երկու երկիրները հետաքրքրող այժմէական հարցեր: Այցելութեան աւարտին տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս մը, ուր ելոյթներ ունեցան երկու երկիրներու ղեկավարները: Այս առթիւ Անկելա Մերգել յայտարարեց որ Գերմանիա զօրավիզ կը կանգնի Լիբանանի եւ ոչ մէկ մտապիտութիւն չունի Իսրայէլի կողմէ կատարուելիք հաւանական յարձակումի մը մասին: Միաժամանակ ան դատապարտեց Իսրայէլի կողմէ Պաղեստինեան բռնազրաւեալ հողերու վրայ նոր բնակարաններու շինութիւնը:

Վարչապետ Հարիրի իր իջեւանած պանդոկին մէջ ընդունեց Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Կրիստ Ուեսթերուալը եւ պաշտպանութեան նախարար Գարլ Թէոտոր Ֆրիշըր Կուլթենպըրկը:

Աւելի ուշ վարչապետ Սաստ Հարիրի իր գլխաւորած պատուիրակութեան ընկերակցութեամբ դարձաւ Գերմանիոյ խորհրդարանին հիւրը: Վարչապետը հանդիպումներ ունեցաւ Գերմանիոյ մօտ ծառայող արաբ պետութիւնները ներկայացնող ղեկավարներուն եւ Դեմոկրատ կուսակցութեան ղեկավար Ֆրից Ուալթըր Շթայմնայէրի հետ:

ԼԻԲԱՆԱՆ ՊԱՇՏՕՆԱՊԵՍ ԶԻ ՄԱՍՆԱԿՑԻՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

Մարտ 27-28 Լիպիոյ մէջ պիտի գումարուի Արաբական Լիկայի Գագաթի ժողովը: Այս առթիւ Լիբանանի Հանրապետութեան նախագահ Միշէլ Սլէյման որոշած է ներկայ չի գտնուիլ սոյն ժողովին: Լիբանանի մասնակցութիւնը պիտի ըլլայ ղեկավարական մակարդակով:

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի պահանջեց պաշտօնապէս մերժել գերաստիճանին մասնակցութեան հրահրը: Պըրրի յայտնեց, թէ Հանրապետութեան նախագահը եւ վարչապետ Սաստ Հարիրի համակարծիք են իր տեսակէտին: Միւս կողմէ, կառավարութենէն ներս, Ամալը եւ Հրգպալլան ներկայացնող նախարարները սպառնացին յետո կոչել նախարարաց խորհուրդի նիստերուն իրենց մասնակցութիւնը՝ Լիպիոյ մէջ տեղի ունենալիք գերաստիճանին Լիբանանի մասնակցութեան պարագային:

Նշենք նաեւ որ 32 տարիներ առաջ Լիբանանի ականաւոր շիիթ կրօնապետ Շէյխ Մուսա Սատր, իր երկու ընկերակիցներով, Լիպիա կատարած այցելութեան ընթացքին խորհրդաւոր պայմաններու մէջ անյայտացած էր: Ասիկա պատճառ դարձած էր որ դիւնապիտակային խիստ լարուած մթնոլորտ մը ստեղծուէր երկու երկիրներու մէջ, ամբաստանութեան տակ առնելով Լիպիոյ նախագահ Մուսամմար Քազաֆին:

ՔԱՐԻՂԻ ԶԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՉ

Սուրիոյ կառավարութիւնը վերջերս արտօնած է քարիւղի կարգ մը ընկերութիւններու որպէս զի հետազօտութիւններ կատարեն երկրի տարբեր շրջաններուն մէջ: Կը կարծուի որ Սուրիոյ տարածքի մէկ երրորդն է որ իր մէջ կը պարունակէ ընդլայնակալ նաւթահորեր: Սոյն պեղումները դրական արդիւնք տալու պարագային՝ յառաջիկայ հինգ տարիներու ընթացքին Սուրիա պիտի կարենայ քարիւղ արտածել:

ԼԻԲԱՆԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՂԱՍԱՊԵԱՆ ԿԸ ԳԼԽԱԽՈՐԷ ՍԱՐՄԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻԸ



Պէջրութի վարչապետարանին մէջ, պետական նախարար Ժան Օղասապեան գլխաւորեց սահմաններու հսկողութեան յաճախումքի առաջին նիստին: Նիստին մասնակցեցան զինուորական խորհուրդի ընդհանուր քարտուղար հազարապետ Սայիտ Իտ, ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն, հազարապետ Աշրաֆ Ռիֆի, ընդհանուր Ապահովութեան տնօրէնութեան անդամ գնդապետ Սուհեյմ Ալ Հարաքէ, բանակի գործողութիւններու բաժնի փոխ տնօրէն գնդապետ Ապտէլ Ռահման Շահիթի, եւ սահմաններու հսկողութեան յանձնախումբի նախագահ գնդապետ Մանուէլ Քարճեան, վարչապետին, արտաքին, ներքին, ելեւմտական եւ հանրօգուտ շինութեանց նախարարութիւններու ներկայացուցիչներ:

Նիստին մասնակցիները քննարկեցին Լիբանան-Սուրիա սահմանագիծին վրայ հսկողութիւնը աւելի ազդու դարձնելու միջոցները: Նիստին աւարտէն ետք, նախարար Օղասապեան յայտնեց, թէ կ'աշխատի սահմանամերձ գիւղերուն եւ քաղաքներուն համար մշակել բարգաւաճման ապահովական համընդհանուր քաղաքականութիւն մը:

ԶՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԱՅՐԻՆ.

«ՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍ ԴԺՈՒԱՐ Է ՊԱՅՔԱՐԻԼ»

«Haynews.am»: Խօսելով հայթրքական յարաբերութիւններու հնարաւոր զարգացումներու մասին՝ Ստամպուլի «Ակօս» թերթի խմբագրապետ, թուրք ոճրագործի կողմէ գոհուած Հրանդ Տինքի այրին՝ Ռաքէլ Տինքը, Ուրուկուէյի «Արաքս» ռատիոկայանին հետ գրոցի ընթացքին նշած է. «Իհարկէ, իմ կարծիքով երկխօսութիւնը դրական է, անկախ անկէ, թէ կը դրսեւորէ ֆուտպոլի կամ այլ առիթներու տեսքով: Թշնամութիւնը ոչ մէկուն շահ չի բերեր, փակ սահմանն ալ ոչ մէկուն ձեռնտու չէ: Յարաբերութիւններ անհրաժեշտ են, որպէսզի հայ եւ թուրք հասարակութիւնները իրարու լաւ ճանաչնան:

Ուզենք, կամ չուզենք, մենք հարեւաններ ենք, եւ չենք կրնար փոխել այդ փաստը: Կ'ուզեմ, որ այս ամէնը անկեղծ ըլլայ, բայց միշտ չէ, որ դիմացինդ անկեղծ է, ուստի պէտք է դուն ալ անկեղծ, սակայն մշտաբան ըլլաս»:

Տինքի այրին, խօսելով թուրքերու կողմէն իրենց ընտանիքի նկատմամբ վերաբերմունքին, նշած է.



է. «Այստեղ մենք հարազատ մարդիկ շատ ունինք: Կայ զանգուած մը, որոնք զնահատած են ամուսնուս աշխատանքը, անոր վերաբերմունքը միւսներու նկատմամբ, մշտապէս կիրթ եւ յարգալից ըլլալը: Այստեղ ապրողներէն շատերը իսկապէս յուզուեցան ամուսնուս սպանութենէն եւ ընդվզեցան կատարուածին դէմ: Սակայն, այսպէս ըսեմ, պետութեան դէմ պայքարը շատ դժուար է»:

ԽԻՍՏ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԷՉ

Քաղաքական կացութիւնը հետզհետէ սկսած է աւելի վատթարանալ Երուսաղէմի արեւելեան մասին մէջ: Այս բոլորին տուն տուող պատճառները մէկէ աւելի են: Առաջինը Արեւմտեան ափի գրաւեալ հողատարածքին վրայ Իսրայէլի կողմէ որոշուած 1600 բնակարաններու շինութիւնն է: Այս արարքին դէմ ԱՄՆ-ը իր պաշտօնական բողոքը ներկայացուց փոխ նախագահ Ջօ Պայտընի միջոցով: Երկրորդ իսլամական կարեւոր սրբատեղիներէն Ալ Աքսա մզկիթին մերձակայքը հրեաները նոր սինակոկի մը բացումը կատարած են, խոր ընդվզում եւ զայրոյթ պատճառելով պաղեստինցիներու մօտ: Այս առիթով ԱՄՆ-ի պատուիրակ ձորձ Միչըլ յետաձգեց իր Միջին Արեւելք կատարելիք ուղեւորութիւնը, սպասելով որ Իսրայէլ յետո կոչէ բնակարանաշինութեան իր որոշումը:

ԱՄՆ-ի պետական քարտուղար Հիլարի Գլինթըն չորս կէտերէ բաղկացած յուշակար մը ներկայացուցած է վարչապետ Պենիամին Նեթանիահազուին: Յուշակար մէջ յատակօրէն կը պահանջուի բնակութեան միաւորներ կառուցելու ծրագիրներուն ամբողջական կասեցումը:

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԶԱՅԵՐՆ ԱԻԵԼԻ ԶՈՒՄՊ ԵՆ

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Հայոց ցեղասպանութեան ճանաչման ամէն մի դէպքին նրանց արձագանքն այս է՝ չարից-փորձանքից հեռու մնալ, պրոբլեմների մէջ չչայտնուել եւ այդ ալիքն էլ չաղթահարել:

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ու երկկողմ արձանագրութիւնների վաւերացման հեռանկարը, որն առանց այն էլ մշուշոտ էր, առաւել եւս մեծ հարցականի տակ դրուեց, երբ անցած Հինգշաբթի ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովը հաւանութիւն տուեց Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող թիւ 252 բանաձեւի նախագծին, իսկ Շուեդիայի խորհրդարանն էլ ուղիղ մէկ շաբաթ անց համանման մի փաստաթուղթ ընդունեց: Երկու դէպքում էլ Թուրքիայից հնչող արձագանքը նաեւ այն էր, թէ դրանք կարող են խոչընդոտել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանն ու արձանագրութիւնների վաւերացմանը: Հիմա արդէն Թուրքիայում գրեթէ բոլոր մակարդակներում են պնդում, թէ՛ սկսած այդ գործընթացներն այլեւս անհնար է տրամաբանական աւարտի հասցնել: Թուրքիան վրդովուած է, Թուրքիան համարում է, որ դա անարդար վերաբերմունք է թուրք ժողովրդի նկատմամբ:

Այսօրինակ զարգացումների պարագայում առաւել ծանր կամ նրբին է Թուրքիայում ապրող մեր հայրենակիցների վիճակը: Նրանք չեն կարող չոգեւորուել, երբ հերթական անգամ որեւէ երկիր ճանաչում է Ցեղասպանութեան փաստը, բայց նաեւ չեն կարող շուայլութիւն թոյլ տալ՝ արտայայտելու իրենց բաւարարուածութիւնը:

Իսկ թէ ինչպէ՞ս կարող են ազդել այս իրադարձութիւնները Թուրքիայում ապրող հայերի վրայ, եւ ինչպէ՞ս են այդ երկրի քաղաքացի մեր հայրենակիցներն ընդունել Ցեղասպանութեան ճանաչման այդ երկու փաստը, փորձեցինք պարզել՝ գրուեցելով Ստամբուլի «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեանի հետ: Վերջինս ասաց, որ միջազգային ասպարէզում տեղի ունեցող նման իրադարձութիւնների ժամանակ Թուրքիայում ապրող հայերի առաջին արձագանքը իրենց մարդկային բնազդն է. «Նրանք առաջին հերթին այդ իրադարձութեանը մօտենում են աւելի խորքից, մտածում



են չարից-փորձանքից հեռու մնալ, պրոբլեմների մէջ չչայտնուել եւ այդ ալիքն էլ չաղթահարել: Այդպիսի միտում կա, եւ դա ահամայցուցաբերուած մօտեցում է: Բայց այդ մարդկային գործօնից զատ, հայ համայնքը, իհարկէ, մօտիկից հետեւում է իրադարձութիւններին, հայ-թուրքական յարաբերութիւնների զարգացումներին, այն ազդեցութիւններին ու գործօններին, որոնք իրենց հերթին կարող են պայմանաւորել այդ յարաբերութիւնների ընթացքը: Նաեւ մամուն է դրա առնչութեամբ հետաքրքրութիւն ցուցաբերում: Ես ինքս, նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներ հրաւիրուել ենք հեռուստաընկերութիւններ, ես ուղիղ եթերում ելոյթ եմ ունեցել: Այս է արձագանքը»:

Թուրքիայում ապրող հայերը միշտ էլ երկիրը եւ մտահոգութեամբ են վերաբերուել որեւէ երկրի կողմից հայերի ցեղասպանութեան ճանաչմանը, առաւել եւս, երբ այդ գործում ակտիւ դերակատարութիւն են ունեցել ոչ միայն արտերկրում գործող հայկական լրբերն եւ հայկական կազմակերպութիւնները, այլեւ առաւել եւս պաշտօնական Երեւանը: Մտավախութիւնը, իհարկէ, պայմանաւորուած է անցելի դառն լիշողութիւններով եւ իրենց նկատմամբ թուրքական իշխանութիւնների, նաեւ ազգայնական ուժերի կողմից տարատեսակ չարձակումների թիրախ դառնալու երկիրը:

Արդեօք այս անգամ Ցեղասպանութեան ճանաչման իրար յաջորդած իրադարձութիւնները կարող են ազդել թուրքական իշխանութիւնների կողմից այդ երկրում ապրող հայերի վրայ: Ա. Գոչունեանն ասաց. «Հիմնական ազդեցութիւն դժուար թէ ունենայ, որովհետեւ այստեղ ապրողները Թուրքիայի քաղաքացիներ են, իսկ այդ իրադարձութիւնները զարգանում են արտերկրներում: Բայց վերջին հաշուով դրանք Թուրքիայում էլ

Շաբ.բ էջ 19

ՈՐ ՏԱՐԱԾՔԸ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏԱԿ

ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ

Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի շուրջ Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում կան պատկերացումներ, որոնք գրեթէ հասնում են կարծրատիպի աստիճանի: Օրինակ, յայտարարութիւնը, թէ Հայաստանի եւ Ղարաբաղի համար հակամարտութեան կարգաւորման գործընթացում առաջնայինը Ղարաբաղի կարգավիճակի հարցն է եւ Ղարաբաղը չի կարող լինել Ատրպէյճանի կազմում: Այդ յայտարարութիւնն ամենաշատը կարելի է լսել իշխանութեան ներկայացուցիչների շուրթերից՝ թէ Հայաստանի, թէ Ղարաբաղի իշխանութեան: Ընդ որում, դա յայտարարուած է հերոսական կեցուածքով եւ առնուազն դէմքի այնպիսի արտայայտութեամբ եւ ձայնի այնպիսի տեմբրով, կարծես արտասոյտութեան հեղինակը հենց նոր ձեւակերպել է ծովից ծով Հայաստանի փաստաթղթերն ու հաստատել տվել նոտարական գրասենեակում: Իրականում, կարգավիճակի առաջնայնութեան եւ Ղարաբաղի Ատրպէյճանի կազմում չլինելու մասին յայտարարութիւնների պաշտօնաւոր հեղինակներից որեւէ մէկը ակնարկ անգամ չի անում, թէ իսկ ինչ տարածք է պատկերացնում կարգավիճակի տակ, կամ որն է Ղարաբաղի այն սահմանը, որը երբեք չի լինի Ատրպէյճանի կազմում: Այդ դէպքում մնում է մտածել, որ այդ արտայայտութիւնների հեղինակները կամ ինչ որ բան թաքցնում են եւ չեն համարձակուած դրա մասին խօսել հասարակութեան մօտ, կամ պարզապէս իրենք էլ չգիտեն, թէ ինչ են հասկանում կարգավիճակ եւ Ղարաբաղ ասելով: Մինչդեռ, իրական կարգավիճակը ընտանեկան նպաստ ստանալու համար տրուող տեղեկանք չէ, այլ լուրջ քաղաքական փաստաթուղթ, որը առաջին հերթին ենթադրում է կոնկրետ սահմաններ: Այլապէս կարելի է անկախ Ղարաբաղ համարել ասենք Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը: Դա իհարկէ չափազանցութիւն է, ու պէտք է յուսալ, որ անկախ Ղարաբաղի սահմանը Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանութիւնն այդքան փոքր չի պատկերացնում: Բայց, քանի դեռ յստակ չէ այդ պատկերացումը, ապա ով գիտէ, թէ ինչքան մեծ են պատկերացում կարգավիճակ ունեցող Ղարաբաղը: Կամ, յաջորդ կարծրատիպացող մօտեցումը բանակցային

գործընթացին Ղարաբաղի մասնակցութիւնն է:

Այդ պատկերացման վերաբերեալ ձեւակերպուած մօտեցումների գերակշիռ մասը տեղաւորուած է բանակցութեանը Ղարաբաղի առաւելապէս ֆիզիքական մասնակցութիւն ենթադրող ընկալման շրջանակում: Մինչդեռ, պարզ հարց է առաջանում, թէ ինչ էր ուրիշ լինելու այժմ, եթէ Ղարաբաղը լիներ բանակցային գործընթացի ուղղակի մասնակից: Միթէ Ղարաբաղի իշխանութիւնը 1998 թուականից ի վեր ցանկութիւն ու կամք է ունեցել հետամուտ լինել Ղարաբաղի շահի ակտիւ պաշտպանութեանը, բայց ասենք Հայաստանի իշխանութիւնը կամ միջազգային երկդիմի հանրութիւնը խանգարել է նրան անել այդ բանը, թոյլ չտալով մօտենալ բանակցային սեղանին: Բանն այն է, որ Ղարաբաղի իշխանութիւնը վերջին տարիներին, ու մինչ այժմ, որեւէ կերպ չի էլ փորձում սեփական նախաձեռնութեամբ հետամուտ լինել ԼՂՀ շահի սպասարկմանը: Դրա համար էլ եթէ տարիներ առաջ համանախագահները գնում էին Ստեփանակերտ, յետոյ սկսեցին բաւարարուել միայն Ղարաբաղի իշխանութեան հետ Երեւանում ԼՂՀ ներկայացուցչութիւնում հանդիպելով:

Իսկ վերջերս էլ կարծես թէ սկսել են բաւարարուել արդեն հիւրանոցներով, որտեղ ԵԱՀԿ գործող նախագահողը ընդունում է ԼՂՀ նախագահին:

Ինչ է փոխուելու բանակցային գործընթացի տրամաբանութեան եւ բովանդակութեան մէջ, եթէ այդպիսի իշխանութիւնը ֆիզիքական ներկայ լինի բանակցային սեղանի մօտ: Բանը թերեւս այն է, որ եթէ Ղարաբաղի իշխանութիւնը որեւէ բան փոխելու ունակ է, ունի փոխելու կամք, ապա բանակցային սեղանի շուրջ Ղարաբաղի ֆիզիքական ներկայութիւնը թերեւս կարող է այդ կամքի եւ կարողութեան դրսեւորման արդիւնք լինել, ոչ թէ նախապայման կամ գրաւական:

Այլապէս ստացուած է, որ հայկական կողմից հնչում են հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ ձեւակերպումներ, հերոսական արտայայտութիւններ, որոնք բացարձակապէս կապ չունեն այն իրականութեան հետ, որ կայ հենց նույն հայկական կողմում: Ու թուում է, որ եթէ այստեղ չեն նկատում իրականութիւնից կտրուած այդ յայտարարութիւնների դատարկու-

Շաբ.բ էջ 19

Advertisement for Bedros S. Maronian insurance services. Includes logos for Blue Cross of California and Blue Shield of California, and A.B.A. Insurance Services. Text: SERVING SINCE 1975, BEDROS S. MARONIAN, (818) 500-9585, BMaronian@AOL.com, FAX 500-9308, ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205. ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՉԱԼՏՐԱՆԵԱՆԻ «ՄԱԵՍԹՐՕ»Ն ԵՒ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՂՄՈՒԿԸ

ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

Այստեղ նպատակ չունինք գեղարուեստական բազմակողմանի վերլուծումն ընել սինեմայի տաղանդաւոր ռեժիսոր ու բեմադրիչ Վիգեն Չալտրանեանի «Մաեսթրո» ֆիլմին: Ատիկա կը ձգենք սինեմարուեստի մեր հմուտ մասնագէտներուն ու շնորհալի քննադատներուն: Հոս պիտի բաւարարուինք կարգ մը նշումներով որոնք կը վերաբերին այս ֆիլմի մղիչ ուժերէն մէկը հանդիսացող դիտանկիւնի եւ կեցուածքի խնդիրներուն:

Կլենտէյլ, Գալիֆորնիա, 28 փետրուար 2010, Կիրակի երեկոյեան ժամը 5:00: «Մաեսթրո» բարձրարուեստ ֆիլմի դիտումը դառնաքաղցր մտորումներու առիթ կու տայ մեզի: Բեմին վրայ, նոյնինքն ակնաւոր սինեմարուեստագէտի սիրտի ջերմ խօսքին մէջ, ֆիլմի բովանդակութիւնը ան կը բնութագրէ որպէս փորձ մը՝ թաւջուլակահար, բոմփոփթոր Արմէն Տիգրանեանի փոթորկոտ կեանքին ընդմէջէն տալու համար «վերջին տարիներու մեր ցաւը»:

Ֆիլմը կը մեկտեղէ՝ գէթ սկզբունքով՝ ցաւին գրեթէ բոլոր գլխաւոր նախադրեալները: Անհատական եւ ընկերային իրերամերժ ձգտումներու բախումներ, անհաշտ հակասութիւններ, պրկուած խաչաձեւումներ: Գեղարուեստական ընդհանրացումը կը ցած է բաւական վարպետօրէն խտացնել եւ իրարու քով բերել տարբեր, նոյնիսկ հակադիր մեկնաբանութիւններու սաղմերը: Ասով ընդլայնուած է իր կարկինի ընդգրկողա-

կանութիւնը: Ատիկա, սակայն, իրագործուած է ի դին իմաստի եւ մեկնաբանութեան յստակութեան պրտորումին: Այլ խօսքով, յստակ է թէ հեղինակը բարոյական ինչ կեցուածք որդեգրած է ժողովուրդի շխանութիւն հակասութեան մէջ: «Հիմա աշուն է, թէ՞ գարուն», հարց կու տայ հեղինակը՝ ֆիլմին մէջ իր միւս եսը (alter ego) եղող ռեժիսորի տիպարին մէջնորդութեամբ: Առաջին բլանի եւ աւելի մշուշապատ ֆոնի վրայ տողանցող սկզբնական թելադրական մեթոդները կը փոխանցեն կարծես՝ վերջապէս, կ'ըսենք՝ մեր օրերու «ցաւի» սպասուող կանխանշանները: Սպասողական պրկումը, ձգտուածութիւնը (suspense): Հոն են՝ այդ նպատակին սատարող սինեմարուեստի թելադրական բոլոր հմտութիւնները, բացառապէս բոլոր հնարաւորութիւնները: Հայաստանեան սինեմայի համար նորութիւն նկատուող այս արտայայտամիջոցներու ներմուծումը աւելիով յուսալ կու տայ հանդիսատեսին: (Անցողակի յիշէք թէ սեռային տեսարաններու ինքնանպատակ օգտագործումը եւ մանաւանդ անոնց անտեղի երկարումը կարելի է դասել այս արտայայտամիջոցներու շարքին: Սինեմարուեստի մէջ էտթիզմի գուսպ ու տեղին թելադրականութիւնն է միայն որ կրնայ սեռային իրապաշտ տեսարանները հեռու պահել հասարակ պոռնկագրութենէ): Ամէն պարագայի, պարտադիր է որ խոստումը յարգուի եւ «ցաւը» յայտնուի իր ամբողջութեամբ:

Ու կը շարունակես սպասել



Դերակատարներ Միքայէլ Պօղոսեան, Կարէն Զանիբեկեան եւ Էֆա Հոբաթա

Կոտոյին, այնպէս ինչպէս յոգնած կը սպասեն Սամուէլ Պէքէթի Waiting for Godot կոթողական թատրերգութեան մէջ: Բայց ոչինչ կը պատահի: Աւելի ճիշդը՝ կը «պատահի» բան մը որ պէտք է որ պատահէր: Սկիզբը յուշի որոշ մաս մը կայ որուն սակայն կը յաջորդէ յուսախաբութիւններու ամբողջ շարանը: Հայրենի մերօրեայ քառասին իրականութեան ուղղուած քամերայի առաջին բլանը կը բռնագաւթեն լուսանցքին ծուարած ձկուն ողնաշարերով «յարմարուողներու» ծաղրական խժալուր քրքիչները: Քմահաձ խօսքեր մէջտեղ կը նետուին ներդաշնակութեան եւ արդարութեան անունով որոնք սակայն,

ըստ էութեան, հրավառութեան նման կ'անէանան օդին մէջ: Ինքնօտարացած իշխանութեան եւ անոր ծաղրածուներուն դէմ փոթորկող քաղաքի հեքն ու ճիշդ մասեթրոյին համար հեռաւոր խորթ ժխոր է որմէ ան կը փորձէ մեկուսացուիլ իր երաժշտութեամբ եւ... յամառ ինքնագոհութեամբ:

Այնուհետեւ, յուսադրուած անկողմնակալ իմաստաւորման ու խորացման փոխարէն՝ բեմադրութիւնն ու երկխօսութիւնը կը ծանծաղին ու կը ճահճանան տակաւ: Իշխանութիւններու ականջին հաճոյ ըլլալու միտուած բարբառումներն

Շար.ը էջ 18

ՄԲ. ԶԱՏԿՈՒԱՅ ԽՐԱԽԾԱՆՔ



Կազմակերպութեամբ՝

Ս.Դ.Հ.Կ. ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՒՂ ԵՒ Հ.Մ.Մ.

ԿԼԵՆՏԵՅԼ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

ԾՈՒՍ ՅԱՅՏԱԳԻՐ – ՀԱԻԿԴԱԽԱՂ – ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ



Կիրակի, 4 Ապրիլ 2010

կէսօրէ ետք ժամը 2:00-էն սկսեալ
Հ.Մ.Մ.-ի Կարօ Սողանալեան սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Մուտքի նուէր՝ \$30.00
Երէխաներու՝ \$15.00



Տոմսերու համար դիմել

ՅՈՎՍԷՓ ԾԻԾԻԵԱՆԻՆ (818) 762-0933 կամ (818) 309-5848

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՄՏԵԱՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՔԱՆԱՄԵԱԿ (1913-1990)

ԱՐՇԱԿ ԳԱԼՈՒՄՏԵԱՆ ՈՐԲԻ ՄԸ ՈՂԻՍԱԿԱՆԸ

ԴՈԿՏ. ԶԱԽԷՆ Ա. ՔՀՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆ

Արեւմտեան Թեմի հովանաւորութեամբ Փաստիմայի Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ Մարտ 7-ին, 2010 թուականին յատուկ հոգեհանգստեան պատարագ մատուցուեցաւ Կ. Պոլսոյ Երջանկայիշատակ Շնորհք Պատրիարքի Գալուստեանի հոգիին համար իր վախճանման ֆաւնամեակին առիթով, մասնակցութեամբ Պոլսահայ Միութեան եւ Խաչատուրեան Երզնայի միջին կատարմամբ: Հոգեհանգստեան նախագահեց Առաջնորդ Տ. Յովնան Արքեպիսկոպոսի, ի ներկայութեան վաչէ Արքեպիսկոպոսի, եւ Գուգարաց Թեմի առաջնորդ Տ. Սեպուհի Եպիսկոպոսի որ նաեւ ֆարգեց: Հոգեհանգստի յարգանքի տուրք մատուցեց ներկայ գրութեան հեղինակը որ գլխաւոր բանախօսն էր յիշատակի ցերեկոյթին:

Հայկական Յեղասպանութեան ետին թողած հայ որբերու եւ որբանոցներու մասին որպէս վկայութիւն կը մէջբերենք հայ որբի մը անձնական յիշատակները 1922 թուականէն մինչեւ 1926 տարիներուն, երբ Արշակ Գալուստեան ցմբուր ըմպելով հայ որբի դառնութեան բաժակը, փոխադրուելով մէկ որբանոցէն միւսը, անցնելով հայու ճակատագրի յատուկ տառապալից ճամբան, անորոշ եւ վտանգալից, ի վերջոյ իրեն բախտակիր երախտներու հետ կ'ազատի ստոյգ մահէ եւ ուժացումէ, դառնալով ապագային պատկառելի հոգեւորական մը:

Արշակ Գալուստեան, ծնած Երզնայի Իյտէ գիւղը 1913 թուին, որբացաւ հօրմէն 1915-ի Մեծ Եղեռնին, եւ երբ եօթ տարեկան էր, դրացի թուրք տանտիրոջ գառնուկները կ'արածէր գարնան, իսկ ձմեռն՝ գոմէշները: 1922-ին Կեսարիոյ Թալաս գիւղէն Իյտէ կուգար ծանօթ աղա մը, որմէ Արշակի մայրը կը խնդրէր իր որդին հետը Թալաս տանիլ ու դպրոց դնել: Թալասի շրջակայքը կային չորս որբանոցներ՝ երկուքը Թալասի մէջ, երրորդը՝ Էֆքերէի, եւ չորրորդը՝ Զինճիտերէի մէջ: Արշակ Թալասի մէջ հայերէն այբուբենը կը սորվի, եւ առաջին անգամ ըլլալով կը լսէ Յիսուսի մասին, պատին վրայ տեսնելով Խաչելութեան պատկերը:

Շուտով ամերիկեան Նպաստամատոցը մերձակայ քաղաքներէն կը հաւաքէ որբերու ու զանոնք կառքով ճամբայ կը հանէ դէպի Պէյրութ: Մերսին հասնելով հոն կը սպասեն քանի մը շաբաթ մինչեւ որ նաւը հասնէր ու գիրենք իսկէնտէրուսի վրայով Պէյրութ հասցնէր: Հոն Արշակ եւ իր բախտակիր որբերը կը բաժնուին երեք որբանոցներու մէջ՝ ձիւթի, Նահր Իպրահիմի, եւ Մամըլթէյնի, ուր կը շարունակեն կիսատ թողած իրենց դասերը: Արշակ կը մտնէ Նահր Իպրահիմ ուր հայերէն կը սորվի եւ կը հետաքրքրուի որբանոցի պատերէն կախուած նկարներով:

1923-ին բոլորն ալ կը վարակուին ջերմէ, եւ միայն Արշակի ծննդավայր Իյտէ գիւղէն ութ տղաք


տութեամբ ստիպում են կանանց զգալ իրենցից կախուած եւ չկայացած: Վերջին տարիներին աշխարհի տարբեր երկրներում կատարած ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այն մարմիններում, որտեղ կանանց մասնակցութիւնը շատ է՝ իրաւունքների պաշտպանութեան, սոցիալական ոլորտներում, աշխատանքն առաւել արդիւնաւէտ է եւ աւելի հումանիտարական: Սոցիալական ոլորտի շատ խնդիրներ առաւել գործնական-կատարողական բնոյթ են ստանում եւ լուծուած են յօգուտ սահմանափակ հնարաւորութիւններով սոցիալական խմբերի: Առհասարակ, տարբեր ոլորտների միջեւ էլ խնդիրների լուծմանն ուղղուած գործունէութեան մէջ կանայք հակուած են փոխզիջումային տարբերակներին: Այն տեսակետներն են շրջանառուած, որ ոչ թէ պիտի լինի ժողովրդավարութիւն եւ նոր միայն կանանց մասնակցութիւնը դառնայ իրական կամ աւելին, այլ եւրոպական գարգացած երկրների փորձը ցոյց է տալիս, որ տեղի է ունենում հակառակը, կանանց մասնակցութիւնն է նպաստում աւելի ժողովրդավարացմանը:

Տղամարդկանց կերպարը ստեղծող եւ կնոջ կերպարին «ընկճող» յատկանիշները, օրինակ՝ ուժը, քաջութիւնը, անկախութիւնը, յաջողակութիւնը, սեռական ազատութիւնը, իր կողակցին ընտրելու «իրաւունք»՝ ժամանակի մէջ «կարիքն ունեն» այսպիսի հոմանիշների կամ համապատասխանաբար փոխհատուցող յատկանիշների, որոնք կարծես, կնոջ կերպարը մօտեցնում են այն գործառնութիւններին, որը եղել է տղամարդու մենաշնորհային ոլորտ: Թէպէտ կինը հասկանում է, որ «հաւասարութիւնը» նրան հիմք է տալիս ոչ թէ ընդօրինակելու տղամարդկանց չափորոշիչները, այլ հաստատելու կանացի արժէքները եւ հայեացքները՝ ընթացող քաղաքական գործընթացների մէջ: Սակայն մի բան է տեսութիւնը, մէկ այլ բան են այս հարցի շուրջ հասարակութեան մէջ վերաբերմունքներն ու պատկերացումները: Դիտարկելով ներկայում մեր քաղաքականութեան մէջ երկար տարիներ «գոյութիւն» ունեցող կանանց, կարող ենք միանշանակ համաձայնել, որ ամէն դէպքում նման ոլորտում խրախուսում է ոչ թէ կնոջ իւրաքանչիւր կողմնակցութիւններով փոխլրացման դերը, այլ տղամարդկային յատկանիշների ընդօրինակումը: Տարածուած է նաեւ (յատկապէս տղամարդկանց մէջ) այն պատկերացումը, որ յատկանիշները, որոնք ցանկալի եւ յատուկ են տղամարդ քաղաքական գործչին, ոչ միայն պարտադիր պիտի լինեն դէպի քաղաքականութիւն գնացող կնոջը, այլ նոյն այդ յատկանիշներով նա պիտի գերազանցի տղամարդուն, որպէսզի «թոյլատրուի, ընկալուի» այդ ոլորտում:

Քաղաքականութեան մէջ կանանց դերի բարձրացման օբիեկտիւ եւ սուբիեկտիւ գործօնների շարքում հասարակութեան մէջ կարծրատիպային մօտեցումների առկայութիւնն է: «Կին վերադաս» բարդոյթը կարծես օրինաչափութիւն է. առհասարակ, կա տարածուած անհանդուրժողականութիւն նոյն պաշտօնի, հաւասար դիրքերի դէպքում, կամ նոյն հար-

թութեան վրայ համագործակցութեան մէջ տղամարդկային «արժանապատուութիւնը» համահաւասար չի ընդունում կնոջ դիրքը եւ դերը: Որքան հասարակութիւնը «բարդութաւորուած» է, այնքան շատ է հոգեբանական պաշտպանական որոշ մեխանիզմների գործածումը, իսկ որքան շատ են դրանք գործածուած, այնքան սուբիեկտիւ են պատկերացումներն ու դիրքորոշումները: Եթէ, օրինակ, մեր հասարակութեան մէջ կանանց բաւականին մեծ զանգուած չի աշխատում (տնային տնտեսուհի), կին-տղամարդ թեկնածուների մրցապայքարում, նոյն վարկանիշի դէպքում էլ չի ընտրի կին թեկնածուին, քանի որ գործում է հոգեբանական արտացոլման մեխանիզմը: Այս մեխանիզմի դէպքում կին ընտրողը վատհուշիւն չի տածում կին թեկնածուի նկատմամբ, քանզի ինքն իր բնոյթով եւ կենսակերպով բոլորովին այլ ակտիւթիւն, հետաքրքրութիւններ ու առաջնահերթութիւններ ունի կեանքում, իր «ուժեղ մասը» իր «տղամարդն է», եւ լուրջ քաղաքական ոլորտը գուզահեռ է տանում սեփական ընտանիքի տիպի (մոտելի) հետ: Նոյն մեխանիզմի գործածումը յատուկ է տղամարդկանց այն շերտին, որոնք որպէս կին-կերպար՝ ի դէմս իրենց կանանց, ընկերուհիների, որոնք աւելի պասիւ ոճ եւ դերակատարում ունեն, ոչ մի կերպ իրենց ընկալումներում չունեն կին քաղաքական գործչի կերպարը:


Հոգեբանական մէկ այլ երեւոյթ՝ քաղաքականութեան մէջ կնոջ դիրքի եւ կին թեկնածուի նկատմամբ վերաբերմունքի խնդիրը համարելով առաջադիմական երեւոյթ, այս համատեքստում քննարկուող հարցերի ժամանակ մարդիկ արտայայտուած են, կարճ պատասխանների դէպքում՝ «դրական»,

իսկ քննարկումներին՝ ընդհակառակը: Օրինակ՝ ռուսական սոցիոլոգիական հետազոտութիւնների Լեւադա կենտրոնի կողմից կատարուած «Կանայք քաղաքականութեան մէջ» հարցման արդիւնքները դիտարկելով՝ կարող ենք տեսնել բաւականին բարձր ցուցանիշ: Այսպէս. «Կողմ է՞ք քաղաքականութեան մէջ կնոջ մասնակցութեանը» հարցին 2008-ի փետրուարին 68%-ը պատասխանել է այո, իսկ 23%-ը՝ ոչ: Միեւնոյն ժամանակ ծանօթանալով ռուսական մի շարք վերլուծական եւ պիզնես կենտրոնների կողմից անցկացուած ինտերնետային ֆորումների բովանդակութեանը, մասնակիցների մեծամասնութիւնը ոչ միայն դրական չեն վերաբերուած, այլ նաեւ տալիս են համապատասխան մեկնաբանութիւններ «հարցի անհեթեթութեան» հետ կապուած: Բացի դրանից, քննարկումների մէջ կարելի է առանձնացնել ընկալման հետաքրքրաշարժ կողմ (ասպեկտ). քաղաքականութեան մէջ կնոջը դիտարկում են բացասական համատեքստում, քանի որ կանայք յուզական են, թոյլ են, անհետեւողական, անկանխատեսելի եւ միաժամանակ «բարձունք» են, որ կեղտոտ քաղաքականութեանն անյարբիր են, եւ որ կինը կորցնում է իր էութիւնը եւ «դառնում» տղամարդ:

Barbara Lee Family Foundation հետազոտական կենտրոնը պարգեւ է թէ ինչպէս են ամերիկացիներն ընկալում կին քաղաքական գործչին: Այսպէս, ամերիկացի ընտրողը երկու գործօն է դիտարկում՝ կնոջ հմայքը, գրաւչութիւնը եւ նրա ձեռքերումները մասնագիտական ոլորտում: Եւ եթէ, օրինակ՝ կինը մասնագիտական մեծ յաջողութիւններ ունի, բաց ընտրողին

Շարք էջ 17

ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ
ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ
Հայ մակերկրային զինուոր
Հ Ա Յ Ա Յ Ն Թ Ա Պ Ց Ի Ն Ե Ր Ո Ւ
Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
Օրոշակ Բանաբաժնի
ՓՐՈՖ. ՎԱՀԱԿԻ ՏԱՏՐԵԱՆ
 ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՑԱՅՏԱԳԻՐ
Կիրակի, 11 Ապրիլ 2010
 Կէսօրէ ետք ժամը 2:00-ից
 Տաղլեան Մշակութային Կեդրոնի սրահին մէջ
 1201 N. Vine St., Hollywood, CA 90038



**ARMENIAN AINTABTY
 CULTURAL ASSOCIATION**
Presents
**THE 90TH ANNIVERSARY COMMEMORATION
 OF AINTAB HEROIC RESISTANCE**
Keynote Speaker
Prof. Vahakn Dadrian
 CULTURAL PROGRAM
Sunday, April 11, 2010, at 2:00 p.m.
 at Taglyan Cultural Center
 1201 N. Vine St., Hollywood, CA 90038

ՄՈՒՏԱՐԸ ԱՋԱՏ
Հիւրերու սիրտուրբ իւր

FREE ADMISSION
Reception following Program

ԹԵՌԴԻԿԻ «ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑ»ՆԵՐԷՆ ԱՄԵՆԵՆ ՀՈՅԱԿԱՊԸ (1916-1920 ժ.-ԺԴ. ՏԱՐԻ)

«Կամքի ի՛նչ կորով: Չնայելով որ սուրի եւ վառօթի մրցում մը կայ տիեզերքիս մէջ, դու՛ն վերստին լոյս կ'ընծայես տարեգիրքդ՝ աւելի հոյակապ քան նախորդները»:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Գիրքի պաշտամունքը, որ Թէ-ոզիկ անուցած է հոգիին խորը, անտեսել տուած է շրջապատի աննպաստ պայմանները, արեան եւ արհաւիրքի ճնշումները, մարսափները կարելին ընելով ամէն գնով լոյսին բերելու համար իր բազմաշխատ «Տարեցոյց»ը, հայ գրասէրին, մտաւորականին տարեգիրքը:

Պատկերացնել 1916-ի պայմանները, ժողովուրդ մը խողխողուած ու հայրենասանուած իր դարաւոր եւ պատմական հողերէն, հայ դպրութեան տաճարի ստեղծագործ սպասարկուները, արեւմտահայ մտաւորականութեան ընտրեալները Չարդի եւ աքսորի ճամբաներուն վրայ նահատակուած, բայց Թէոզիկ կամքի ինչ անյողողող կորովով գիրքի պատնէշին վրայ անմար կը պահէ իր բազմաթիւ կրակները: Այդ կրակին բոցով արծարծ պահելու համար հայ գիրքին լոյսը: Կորսուած հայրենիք, կորսուած ժողովուրդ բայց մնացորդացին համար գիրքին լոյսը խաւարէն հալածուած հայութեան հոգեմտաւոր ոլորտը պայծառ ու լուսաւոր պահելու վճռակամութեամբ: Թէոզիկ իր «Ամէնուն Տարեցոյց»ով դիմագրաւելով նոյնիսկ հայ մտաւորականին վերապահուած դառն ճակատագիրը, հայ գիրքի եւ լոյսի ճանապարհին վրայ կը շարունակէ իր նուիրական առաքելութիւնը: Այդ առաքելութիւնը առաւել եւս կ'արժեւորուի հայ գիրքի ու բանի սրբարար երթը չկասեցնելու կամքով եւ կորովով: Բանտն ու հալածանքը չեն յաջողոր տեղի տալու Թէոզիկը իր լոյսը վառած պահելու անվատ հաւատքէն: Այն հաւատքէն, որ Մաշտոցէն կ'առնէր իր նուիրումի ոգին: Թէոզիկ գերծ չի մնար իթիթիհատի հայ մտաւորականները հալածելու, բանտարկելու, չարչարելու բիրտ ու վայրագ քաղաքականութենէն: Երկու անգամ բանտարկուելէ ետք, ստոյգ մահը պիտի ըլլար նաեւ իր եղբորական ճակատագիրը, բայց հրաշքին փրկարար ձեռքը գինք պիտի ազատէր գիրքի միւս առաքելներուն նահատակութեան անողոք եւ քստմնելի բախտէն...:

Եղեռն ու անոր հետեւանքները չորս տարուան պարտադրական դադար մը կու տան Թէոզիկի 1916-1920 ժ.-ԺԴ. տարիներու տարեցոյցը հրատարակութեան պատրաստելու համար, բայց ընդհատուած տարիները բեղուն տարիներ կ'ըլլան: Ոչ միայն «Ամէնուն Տարեցոյց» ին բովանդակութեան համար, որ նախորդ տարիներուն կը գերազանցէր, այլեւ՝ եղեռնապատմի էջերով որ առաջին համաշխարհայինի անցուդարձերուն կը գուզադիպէր: Պատմական յիշատակարան մը արդարեւ:

Չորս տարիներու կեանքը ընդգրկող եւ պատկերող «Ամէնուն Տարեցոյց»ին այս հատորէն կը բացակային եղեռնին զոհացած մտաւորականներէն շատերուն ստորագրութիւնը, սակայն անոնցմէ՝ Դանիէլ Վարուժանէն, Ռուբէն Սե-



լակէն, Գեղամ Բարսեղեանէն, Արտաշէս Յարութիւնեանէն, Ե. Սրմաքէշխանյանէն (Երուխան), Բարսեղ Շահպազէն եւ Թլկատինցիէն կան նամակներ, որոնք կը պարունակեն իրենց մտածումներէն եւ ապրումներէն էական վկայութիւններ: Գրականութեան պատմութեան համար շահեկան նիւթեր:

Եղեռնի վերաբերեալ ականատեսի վկայութիւններով (վերապրողներէ) եւս Թէոզիկ իր «Ամէնուն Տարեցոյց»ին այս հատորը եղեռնի յատուկ գրականութեան անտիպ նիւթեր հայթայթած է, որոնք կը նախ օգտագործուի պատմա-վաւերագրական ուսումնասիրութիւններու համար: Ահա թէ ինչու Թէոզիկի «Ամէնուն Տարեցոյց»ներուն վերահրատարակութիւնը որքան նիւթեր մոռացութենէ կը փրկէ, անոնց այժմէականութիւն կու տայ, նոր լոյսեր սփռելով:

Գրողներէ տպուած նամակներու կողքին նոյնքան հաճոյքով կը կարդացուին գրական էջերը՝ Գրիգոր Զօհրապի մասին Թէոզիկի գրած յօդուածը, Միքայէլ Շամտանճեանի «Չարագողութիւններ», Ռուբէն Զարդարեանի «Աշխատութեան Եղանակը»:

Յ.Գ. Սրմաքէշխանի «Հոգևոյ Անմահութիւն», Ենովք Արմէնի «Զիւնը»: Յատկանշական է վահան Թէքէեանի «Թէոզիկին եւ իր Տարեցոյցին» գրութիւնը, որ կ'ոգեկոչէ Թէոզիկի հին տարեցոյցներէն տպաւորութիւնները. «Անոնցմէ՝ որոնց դէմքն ու գիրը տպեցիր այստեղ, քանինը, քանինը են որ չկան այլեւս, որոնք կ'ըլլան անդունդը մէկ անգամէն, որոնցմէ նոր յօդուած մը եւ նոր լուսանկար մը պիտի չկրնաս առնել այսուհետեւ երբեք, երբե՛ք եւ որոնց մտածումն ու դիմագիծերը պիտի մնան անփոփոխ յաւիտեան, ինչ որ եղան 1915-ին...»: «Քանինը, քանինը» չեղած ըլլալու տիտուր իրողութիւնը հաստատելով վահան Թէքէեանի «Ամէնուն Տարեցոյց»ին վաղուան բովանդակութիւնը մտահոգութեան առարկայ կը դարձնէ ափսոսանքի դառն շեշտով: Հոս է, որ կրկին կը բարձրանայ Թէոզիկի

Շար.ը էջ 19

ՄԱՐԱՇԻ 1920-Ի ԶԱՐԴԸ ՅՈՎԱՍԷՓ ՏԵՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՎԱԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՄ

ԳՐԻԳՈՐ ՏԱՔԷՍԵԱՆ

Մարաշի աղէտին 90-ամեակին առիթով, Հալէպի Մարաշի Հայրենակցական Միութիւնը (Մ. Հ. Մ.) այս տարուան Յունուարին վերահրատարակած է Յովսէփ Տէր Վարդանեանի «Մարաշի Զարդը 1920-ին եւ Պատմական Համառօտ Ակնարկ Մը Իր Անցեալին Վրայ» գրքոյկը: 1927-ին Երուսաղէմի մէջ լոյս տեսած հրատարակութեան նոր տպագրութիւնը կատարած է Հալէպի «Արեւելք» տպարանը: Հեղինակը իր աշխատութիւնը ձօնած է այս Զարդին նահատակուած տիկնոջ, երեք զաւակներուն եւ քահանայ հօր ու երէցիկին մօր յիշատակին: Իբրեւ յառաջաբան իր երկու խօսքին մէջ հեղինակը կը նշէ, թէ կատարեալ գործ մը ընելու յաւակնութիւններու եւ միջոցներու ներած սահմանին մէջ ջանացած եմ կարգ մը վաւերական տեղեկութիւններ եւ դէպքեր քաղուածաբար հաւաքել եւ յանձնել ապագայ սերունդին»:

Գովելի նախաձեռնութեամբ մը, Լիբանանի Մ. Հ. Մ.ը, գործակցութեամբ Հալէպի իր քոյր մասնաճիւղին (վարչականօրէն անկախ իրարմէ), սոյն գիրքը հրատարակ կ'իջեցնէ եւ ձրիօրէն կը ցրուէ հայրենակիցներուն՝ աղէտին 90-ամեակի ոգեկոչման օրը (24 Յունուար):

Փոքր չափի 104 էջերէ կազմուած այս աշխատասիրութիւնը կը բաղկանայ երեք մասերէ:

Ա. մասը պատմական համառօտ ակնարկ մըն է Մարաշի ու անոր հայութեան մասին (էջ 10-42): Ան կը սկսի Ն. Ք. 1110 թուականէն, կ'ընդգրկէ Բագրատունեաց թագաւորութեան շրջանը, անոր անկումը, ապա հայ իշխաններու եւ անոնց ենթակայ բնակչութեան մէկ մասին տեղափոխումը Կիլիկիա, Խաչակիրներու ժամանակաշրջանը, Կիլիկիոյ հայկական թագաւորութեան դարերը, հայոց այդ պետութեան վրայ սելճուքներու եւ Եգիպտոսի մեծ լուքներու յարձակումները, թագաւորութեան վերացումը, ապա, 1587ին սուլթան Մուրատի օրով Մարաշի գրաւումը օսմանցի թուրքերուն կողմէ, որմէ ետք քաղաքն ու անոր շրջանը առանձին կուսակալութիւն մը կը կազմեն Օսմանեան Կայսրութեան մէջ:

Յատուկ ենթագլուխներ կը վերաբերին աւետարանականութեան եւ կաթողիկէութեան Մարաշ մուտքին: «Մուտք Բողոքականութեան ի Մարաշ» ենթագլուխին մէջ (էջ 18-20) կը նկարագրուին հայ աւետարանականներու համայնքին յառաջացումը քաղաքին մէջ ու անոր բաժանումը Մայր Եկեղեցիէն՝ ամերիկացի ու գերմանացի միսիոնարներու ջանքերով: Մարաշի մէջ կը հիմնուին աւետարանական երեք ժողովարաններ՝ Ա., Բ. եւ Գ. եկեղեցի անուններով: «Մուտք Պապականութեան (Կաթողիկէ կուսութեան)» վերնագրուած ենթագլուխին մէջ (էջ 20) շատ համառօտ կերպով կը ներկայացուի ընտանեկան գծով կաթողիկէութեան զոհացած զաւակներուն մը ջանքերով Մարաշի մէջ կաթողիկէութեան տարածման եւ 1861 թուականին հիմնուած ու 1865ին օծուած հայ կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ պատմու-

թիւնը: 1930 թուականին իր հիմնարկութենէն ետք, Պուրճ Համմուտի Նոր Մարաշ թաղամասը օժտուեցաւ հայ երեք յարանուանութեանց եկեղեցիներով՝ Ս. Քառասնից Մանկանց հայ առաքելական, Ս. Փրկիչ հայ կաթողիկէ եւ Պուրճ Համմուտի հայ աւետարանական եկեղեցիներ: Հալէպի հայաշատ Մէջտան թաղամասին մէջ ալ կառուցուեցաւ Ս. Գէորգ եկեղեցին՝ նոյնպէս Մարաշի եկեղեցիներէն մէկուն անունով վերակոչուած: 1895ին, Ապտուլ Համիտի կազմակերպած ջարդերուն ժամանակ, Մարաշի մէջ «հայութիւնը շուրջ իննը հարիւր անձի կորուստ կ'ունենայ» (էջ 26): 1908-ին Օսմանեան Սահմանադրութիւնը կը վերահսակուի: «Երիտասարդ թուրքեր»ու յայտարարած «Ազատութեան» կը յաջորդէր Կիլիկիոյ կամ Ատանայի ջարդը, որուն զոհացին մօտաւորապէս 30 հազար հայեր (էջ 31): Այս սպանդին, Մարաշի մէջ կը նահատակուին 500-600 հայեր:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրէին ու անոր սկսելէն անմիջապէս յետոյ, 15 Յուլիս - 7 Օգոստոս 1914-ին, բազմաթիւ հայ մարաշցիներ կը կողոպտուին ու կը տարագրուին:

1920-ի Յունուար ամսին տեղի կ'ունենայ հայոց վերջին ջարդը եւ շատ քիչ թիւով մարաշցիներ կ'ազատին՝ տարագրուելով Սուրիա եւ Լիբանան: Այս վերջնական հարուածը Հայութեան կու տայ քեմալական թուրքիան՝ իր միլիտարիզմով: Հայութեան, այս պարագային՝ Մարաշի հայութեան իրարայար ջարդը այս երեք ցեղասպանութիւնները ցոյց կու տան, որ թուրք մնացած է նոյնը՝ ըլլալ ան սուլթանական, երիտթրքական թէ քեմալական: Հետեւաբար, Հայաստանի Հանրապետութեան իշխանաւորները եւ առհասարակ բոլոր հայերը այսօր ալ պէտք է չափազանց զգոյշ ըլլան անոր հետ յարաբերելու ժամանակ, մանաւանդ որ ան դեռ կը շարունակէ ուրանալ իր ցեղասպան անցեալը, ինչը ցեղասպանութեան շարունակութիւն կը նշանակէ:

Գրքոյկին երկրորդ մասը (էջ 43-70) կը սկսի «Տեղագրական Դիրքը» բաժինով, ուր փոքր պարբերութիւններով համառօտ տեղեկութիւններ կը տրուին Մարաշի կլիմային, ջուրին, գետերուն, բերքերուն, արհեստներուն, գիւղերուն, բերդերուն, վանքերուն, ուխտավայրերուն, եկեղեցիներուն (6 հայ առաքելական, 3 աւետարանական եւ 1 կաթողիկէ) եւն. մասին: Կը նշուի, թէ նախքան համաշխարհային պատերազմը 75-80 հազար խառն բնակչութեան (թուրք, հայ, յոյն, հրեայ) մնացած է 5500 հայ կաթողիկէ, 8000 հայ աւետարանական, 16500 հայ առաքելական, ընդամենը՝ 30 հազար բնակչութիւն: «Կրթական Հաստատութիւնք» բաժինին մէջ կը յիշուի, թէ բոլոր եկեղեցիներուն կողքին կային նաեւ նախակրթարաններ: 1880-ին կառուցուած է Կեղրոնական վարժարանը, իսկ աւետարանական վարժարան մը, ինչպէս նաեւ ամերիկացի միսիոնարներու հաստատած երկրորդական վար-

Շար.ը էջ 18

1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday—Saturday
9 am - 8 pm



825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday—Saturday
9 am - 8 pm

EVERYDAY LOW PRICES

 <p>GREY GOOSE — VODKA —</p> <p>\$21.99</p>	 <p>JOHNNIE WALKER BLACK LABEL</p> <p>\$18.99</p>	 <p>STOLICHNAYA RUSSIAN VODKA 1.75L</p> <p>\$18.99</p>
 <p>SKYY VODKA</p> <p>\$9.49</p>	 <p>RUSSIAN STANDARD VODKA</p> <p>\$10.99</p>	 <p>DOUBLE WHITE PREMIUM VODKA</p> <p>\$8.99</p>
 <p>milagro SILVER TEQUILA</p> <p>\$12.99</p>	 <p>PATRÓN SILVER TEQUILA</p> <p>\$29.99</p>	 <p>Jose Cuervo TEQUILA ESPECIAL</p> <p>\$9.99</p>
 <p>X RATED FUSION LIQUEUR</p> <p>\$14.99</p>	 <p>ORA VODKA</p> <p>\$12.99</p>	 <p>El Nassaya ARAK</p> <p>\$21.99</p>
 <p>RÉMY MARTIN VSOP COGNAC</p> <p>\$29.99</p>	 <p>Hennessy VS COGNAC</p> <p>\$20.99</p>	 <p>COURVOISIER VS COGNAC</p> <p>\$16.99</p>
 <p>ROBERT MONDAVI PRIVATE SELECTION ASSORTED VARIETALS</p> <p>\$6.99</p>	 <p>RÉMY MARTIN XO COGNAC</p> <p>\$92.99</p>	 <p>NOY 10 YRS ARMENIAN BRANDY</p> <p>\$31.99</p>

Unbeatable Prices! Huge Selection!

*This ad expires on 03/21/10 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CC's • All items are 750ml in size unless specified.

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ ՄԵՐԳԵՅ ՇԱՐՆՈՒԲԱՐԵԱՆ

Ժամանակին շունն ու կատուն Տանել իրար չէին կարում. Թէ որ մի տեղ հանդիպէին, Յեռուից-հեռու կամ տեսնէին, Գզվոտոցը նրանց միջեւ Կը սկսուէր հենց մոյճ վայրկեանին:

Շունը որպէս հսկայ մարմին Վարյ կը տար փոքր կատուին. Թէ, ինչպէ՞ս ես համարձակուեմ Առանց գիր-միր ուղարկելու, Առանց իմ դէմ խոնարհուելու, Դու իմ ճամբին երեւալու:

Շան հաչոցը, «գոռոցոցը» Կը ստիպէր, որ այդ կատուն, Իր ունեցած մերժուելով, Թաթիկներով ու ճանկերով, Իր Ֆշոցով, խուլ ձայներով Պատասխանէր. «Առ քեզ, շուն»:

Շունը մի պահ կը սթափուէր, Խելքը գլուխը կը հաւաքէր, Վրայ տալը կը յապաղէր Ու նորից նա կը յարձակուէր:

Իսկ հենց տեսնէր կատուն դէմի Շատ յամառ է, ծունկ չի գալի, Կը փորձէր նա սիրաշահել, Կը փորձէր նա լեզու գտնել, Որ այլ պահին նորից ցոյց տար Այդ յանդուգն պիտով կատուին, Որ ուժեղէր նա հիմնովին, Ու զիջող չէ բոլորովին:

Բայց եւ գիտէր իր պապերուց Եկած խօսքը դեռ հին-հնուց, Որ այդ կատուն ժամանակին Շատ ուժեղ էր, հօգոր-կարգին, Որ աշխարհում, որպէս տեսակ, Եղել էր նա բազմաքանակ Ու հիմա էլ ի՞նչ համարձակ Պաշտպանուում է այսպէս հաւաք:

Այս մտքերով շունն ու կատուն Կռուի տեղը թողած, յոգնած, Յեռանում էին մէկը-միւսից Մնում դժգոհ կատարուածից:

Այսպէս երկար շատ տարիներ Շունն ու կատուն առանց յարգի, Առանց իրար բարեւ տալու, Ապրում էին ոնց թշնամի:

Բայց եկել են վրայ հասել ժամանակները նորանոր, Երկրի վրայ այս հին ու նոր Կեանքն է փոխուել ահաւոր:

Փոխուել է նա ծով-ցամաքով, Կենդանական իր աշխարհով, Էլ աւելի, նոր մոլորակ Պիտի դառնայ յայտնի շուտով:

Այս տեսնելով կամ լսելով, Շունն ու կատուն բաւ կը փորձեն

Լինել խոհեմ, հաշտ ու բարի, Որ անցեալը քիչ մոռացուի: Իսկ ապագան, որ այնքան Խոստումնալից է ու շահեկան, Լինի խաղաղ, մտերմական Եւ, պարզապէս, կենդանական:

Ու այստեղի շունն ու կատուն Լուրջ փոխուեցին իրենց վարքում.

Ո՞վ է տեսել շունը կատուին Սիրով մամ տայ իր ուսերին Կամ էլ կատուն, շատ հնազանդ, Յետեւի շան քայլին հանդարտ: Եւ վերջապէս, ո՞վ է տեսել Յաշտ ու խաղաղ շանն ու կատուին,

Որ ընդհանուր մի կեր ուտեն, Մի ամանից ու միասին:

Ահա այսպէ այլ են դարձել, Դարձել նրանք հանց «մտաւոր» Այնքան փոխուել ու զարգացել, Որ դժուար է պատկերացնել:

Լուրջ հասաւ առիւծներին. Թէ, գիտէք ի՞նչ, շունն ու կատուն,

Այդքան տարի ոնց թշնամի, Որ ապրում են այս աշխարհում, Որոշել են իրար ներքեւ, Ապրեն խաղաղ, իրար յարգեն, Այնպէս անեն, որ միւսներին Որպէս օրինակ ծառայեն:

Եւ որ յայտնի «կռիւթ գոյի», Որ շարժին է կենդան երկրի, Նրանց համար, որպէս դրոյթ, Էլ չի լինի ընդունելի:

»Մեծ ժողովը« գցեց-բռնեց, Սրա-նրա հետ բանակցեց, Վերջը պարզեց ու որոշեց. Բանգի դարն է անցել, փոխուել, Շանն ու կատուին պիտ խրախուսել,

Պէտք է նրանց պարզեւատրել, պարզեւատրել մի նշանով, Որ ոչ միայն ծով-ցամաքում, Այլեւ կապոյտ պարզ երկնքում, Ցոյց տայ կենդան ողջ աշխարհին, Խաղաղութիւն ամենեցուն:

ԿԻՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՐԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 13-էն

դուր չի գալիս, վերջինս նրա օգտին չի քուէարկի: Մինչդեռ վերաբերմունքը տղամարդ գործչին բոլորովին այլ է. ընտրողը չի առանձնացնում քաղաքական գործչի «անձը» եւ «մասնագիտական որակները»:

Կարեւորագոյն պատճառներից մէկը, որ չի խրախուսում քաղաքականութեան մէջ կնոջ օգտին քուէարկելը, եւ որն այս կամ այն չափով ընկալում են շարքային քաղաքացուց մինչեւ բարձր դիրք ունեցող պաշտօնեան՝ դա մեր տիրապի հասարակութեան մէջ «հարցեր լուծելու իւրապատուկ մշակոյթն» է, որը բացառում է կնոջ հետ նման գործարքների գնալը: Գոյութիւն ունեն որոշակի օղակներ, շերտեր եւ այնպիսի երեւոյթներ, որոնք որոշակիօրէն «անբաժանելի» մաս են կազմում, կամ «իւրապատուկ շղթայ» են «պետութիւն» կոչուող համակարգում՝ կոռուպցիա, գորշ կարդինալ, ոստիկանութիւն, օրէնքով գողեր, օլիգարխներ: Դրա համար այն երկրներում եւ այն մարմիններում, որտեղ կա կնոջ ներկայութիւն, կոռուպցիայի եւ սոցիալական արդարութեան երեւոյթներն այլ մակարդակ ունեն:

Գոյութիւն ունեցող դերային հակադրութիւնը, որի վրայ կարող է հիմնվել տղամարդու «առաւել-

լութեան» կամ տղամարդու կերպարի ընդգծումը՝ տարբեր տեսակի հասարակութիւններում եւ մշակոյթներում կարող է ունենալ իր առանձնապատկութիւնները, «հանդուրժողականութեան աստիճանը» դէպի «թոյլ սեռը», սակայն, գլխաւորապէս, միեւնոյն է՝ այն գոյութիւն ունի, եւ «առաւել» է կարծել, որ կզաժանակ, որ կինը եւ տղամարդը հաւասարապէս կը դիտուեն եւ կ'ընդգրկուեն միեւնոյն գործունէութեան մէջ՝ պահանջուող միեւնոյն յատկանիշներով:

Քաղաքականութեան մէջ պիտի օգտագործվեն կնոջ առանձնապատկութիւնները եւ փոխլրացման սկզբունքով աւելի նպաստաւոր (օպտիմալ) գործունէութիւն ծաւալուի, այլ ոչ թէ կինը հաւասարաչափ պայքարի մէջ մտնի տղամարդու հետ՝ հաշուի առնելով նոյն յատկանիշները, եւ նոյն համատեքստում: Իրական արդիւնքներ եւ գործունէութիւն կ'ունենանք, եթէ կինը (ինքն էլ հասկանալի) իր կանացի առաւելութիւններով հանդերձ՝ մրցապայքարի մէջ ոչ թէ ընդօրինակի, այլ հանդէս գալ ուրոյն դիրքորոշմամբ ու դերով:

Քաղաքական ընտրապայքարում եւ, առհասարակ, հիմնախնդրի վերաբերեալ մօտեցումն է փոխել պէտք, ոչ թէ տղամարդուն եւ կնոջը փորձել հաւասարեցնել:

ԳԼԽԱՅԱԻ

Շարունակուած էջ 16-էն

շաններուն կողքին, պատճառ կը դառնան ժամանակաւոր, սուր, մեղմ եւ կամ զօրաւոր գլխացաւի:

ա. Աչքի հիւանդութիւններ, տեսողական տկարութիւն, խաժամ-թութիւն (glaucoma) եւ ցանցենիի անակնկալ տեղաշարժ (retinal detachment): Գլխացաւը կեղերոնացած կ'ըլլայ աչքին շուրջը եւ խորը.

բ. Քիթի խցում, քիթի սուր կամ մնայուն խոռոչատապ (sinusitis):

գ. Վիզի ողնոսկրային (vertebral) եւ մկանային հիւանդութիւններ.

դ. Ակուններու եւ լինտերու բորբոքումներ. ե. Ականջի արտաքին, միջին եւ ներքին բաժիններու բորբոքումներ, պարզ ուռեցքներ եւ խլիրդ.

զ. Մնօտային (temporomandibular) յօդաբորբ, անշարժութիւն, ոսկրային անբնական աճում եւ տեղաշարժ (dislocation).

Այստեղ քանի մը ընդհանուր նկատողութիւններ. 1. Գլխացաւը կրնայ ըլլալ

ազդանշան հաւանական լուրջ հիւանդութեան մը,

2. Ախտաճանաչում կատարելէ ետք, հիմնական դարմանումին եղանակը պէտք է իրագործուի շուտով,

3. Նախքան ախտաճանաչումը գործածուած ցաւամոք դեղերը յաճախ կը խանգարեն ախտաճանաչման գործընթացը,

4. Հետեւիլ գլխացաւի զարգացման եւ հոլովոյթին,

5. Շուտով դիմել բժշկի, երբ գլխացաւը տեւէ մէկ շաբաթէ աւելի եւ արձանագրէ յստակ զարգացումներ,

6. Շտապ գլխու CT Scan եւ MRI պէտք է կատարել, երբ՝

ա. Գլխացաւը շատ անակնկալ, սաստիկ եւ սուր է.

բ. Գլխացաւը կը պատահի ջղացնցումի (convulsion) հետ միաժամանակ.

գ. Հիւանդը կ'ունենայ նաեւ գիտակցութեան խանգարում եւ կամ կորուստ.

դ. Գլխացաւին կ'ուղեկցին ակնային սուր դժուարութիւն, ցանցենիի ուռեցք (papilledema) եւ շատ բարձր արեան զերճնշում:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Avenue

Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:

Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝

(626) 398-0506

ՄԱՐՁԱԿԱՆ

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

ՄԷԿ ԱՐԾԱԹ, ԵՐԿՈՒ ԴՐՈՆՃ ԳՐԱՆ ՓՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒԽ

Հայաստանի բունցքամարտիկները Չեխիայի Ուստի Նադ Լաբեմ քաղաքում անցկացրած Գրան Պրիի մրցաշարից հայրենիք վերադարձան երեք մետալով:

Բոլորից յաջող հանդես եկավ 69 կգ քաշային Արմեն Եփրեմեանը, որը յաղթահարեց առաջին երկու արգելքները եւ մտաւ եզրափակիչ: Աւաղ, վերջին մրցամարտում մեր մարզիկը ընդամենը մէկ միաւորի տարբերութեամբ պարտուեց հունգարացի Բալաշ Բասկայիին՝ 1:2:

Չնայած ձախողմանը, Հայաստանի բունցքամարտի հաւաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբեանը, Ա1+ե-ի մարզական լրագրողի հետ գրուցում յայտնեց, որ գոհ է Արմենի ելուցից: «Նա առաջին երկու փուլերում յաղթեց աշխարհի եւ Եւրոպայի ներկայիս ախոյեաններին: Ինչ վերաբերում է եզրափակիչ մրցամարտին, ապա մրցավարները վերջին պահին, կարելի է ասել, միաւոր «նուիրեցին» հունգարացի բունցքամարտիկին եւ յաղթանակը շնորհեցին նրան»:

Կիսանշանային մտած մեր միւս երկու բունցքամարտիկները՝ Արա Պուլուզեանը (60 կգ) եւ Յուլյա Անանիկեանը (91 կգ) միաւորներով պարտուեցին իրենց մրցակիցներին եւ բաւարարուեցին պրոնոզ մետալներով:

«Տղաներն ընդհանուր առմամբ լաւ հանդես եկան: Գլխավորն այն էր, որ նրանք հնարաւորութիւն ստացան ծանօթանալու Եւրոպայի առաջնութիւնում իրենց հաւանական մրցակիցների հետ, ձեռք բերեցին միջազգային մարտերի նոր փորձ: Միայն Հրաչիկ Զաւախեանը (64 կգ) իր հնարաւորութիւններից ցածր հանդես եկաւ, որն առաջին իսկ մրցամարտում անսպասելի պարտուեց ոչ այնքան ուժեղ թուրքիցի բունցքամարտիկին: 57 կգ քաշային Ազատ Յովհաննիսեանը չնայած ոչնչով չզիջեց իր մրցակցին, սակայն մրցավարները հաւասար պայմաններում, չզիտես ինչու, նախապատուութիւնը տուեցին գերմանացի մարզիկին», - եզրակացրեց Ռաֆայել Մեհրաբեանը:

ՉԱՆՏՐԱՆԵԱՆԻ «ՄԱՆՍԹՐՕ»Ն ԵՒ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՂՄՈՒԿԸ

Մարումակուած էջ 13-էն

ու խաղարկութեան խուպոտ ցնցումները կրնան միայն խոցոտել արդի բանական հայուն տեսա-լսողական զգայնութիւնը:

Չալտրանեանի հերոսը սփոփիչ ոչինչ ունի արտասանելիք երբ ցուցարարները իրեն կ'երկարեն բարձրախօսը: Իր երկրի եւ ժողովուրդի իսկական ցաւերուն անհաղորդ, ներանձնական քառսին մէջ խրած Մանսթրօն իր աչքերը կը գոցէ՝ հրկիզուող քաղաքի ողբերգութեան առջեւ: Ան միայն մէկ «բողոք» ունի - ցուցարարներու աղմուկը արգելք կ'ըլլայ իր հեղինակած «Ռեքվիեմ»ի երաժշտական փորձերուն՝ Օփերայի յարակից շէնքին մէջ: Անկարեկից նոյն անհամ հիւմուրով շաքարապատուած է իր պատասխանը երիտասարդ թղթակցուհիի այն հարցին թէ իշխանութիւններու անօրէնութիւններուն դէմ ինչու լուռ են արուեստագէտները: Ան կը պատասխանէ թէ ինք լուռ չէ, այլ կը նուազէ:

Իր ժողովուրդի ձակատագրով հետաքրքրուած որեւէ պարկեշտ ու գիտակից քաղաքացի - չխօսելու համար յառաջապահ արուեստագէտի մասին - բաւական խիտ բամպակով խցանած ըլլալու է իր ականջներն ու խիղճը՝ նման տափակութիւններով բաւարարուելու եւ գանոնք ծիծաղաշարժ գտնելու համար:

Աւելի պարզ խօսելով, հանդիսատեսի իմացական կարողութեան հանդէպ որքան արհամարհականօրէն մօտենալու է՝ աւազակապետական իշխանութեան ոճրային յանցագործութիւններուն աչք գոցելով ժողովուրդը ներկայացնելու համար որպէս դիմազուրկ ամբոխ կամ խուժան:

Պարզ ժողովուրդը, Հայաստանի քաղաքացիներ կայացուած է որպէս անհանդուրժող, աղմկաւոր, ներդաշնակութիւնը խափանող: Օփերայի շէնքին մէջ են «լաւ տղաքը» որոնք միայն «ներդաշնակ ձայներ» կ'ուզեն ստեղծագործել:

Եւ յանուն հայ ժողովուրդի - ախ, այդ ապերախտ ամբոխի - փառքին: Այս ամէնը տեղի կ'ունենայ օդին մէջ: Իշխանութիւնները գոյութիւն չունին: Անոնք կամ անոնց դրածոները կ'երեւան միայն իրենց հաւատարիմ ծառայողներուն շքանշան ու պատիւներ պարգեւելու ատեն: Կամ որպէս օրինապահ ուժեր որոնք անշարժ գիծերով կանգնած են երկրին անդորրը ապահովելու համար:

Տխուր է ականատեսն ըլլալ անվիճելիօրէն բարձրորակ տաղանդի յարաբերական վրիպանքին կամ խափանման՝ պարզ այն հասարակ պատճառով որ արուեստագէտը անյարիր տուրք կու տայ անցողակի, պատահական «վերահսկիչներուն - այս պարագային՝ իր ժողովուրդը կեղեքող եւ ասպատակող ապօրինի եւ անօրէն իշխանութեան: Անարդարանալի տուրք մը, միակողմանի լուծութիւն մը, չշահուած պայմանական բարեացակամութիւն մը՝ փոխարէնը վայելելու համար բարոյական մեծարանք եւ/կամ նիւթական հատուցում - բան մը որ կը զլացուի արժանաւոր այլ արուեստագէտներուն՝ անոնց սկզբունքային անշեղ կեցուածքին համար:

«Հիմա աշուճ է, թէ՞ գարուն» հեղինակի հռետորական հարցման ես պիտի ուզէի պատասխանել՝ «Ո՛չ մէկը, ո՛չ ալ միւսը, այլ սառնաշունչ ձմեռ է հիմա»: Այնպիսի ցուրտ ձմեռ որ այսօր սառեցուցած է նոյնիսկ բարձր գիտակցութեան տէր կարգ մը ազնիւ արուեստագէտներու այնքան զգայուն սիրտը՝ իրենց հարազատ ժողովուրդի իսկական ու մեծ ցաւին հանդէպ:

Հայ ժողովուրդը իր ամենացուրտ ձմեռներուն ալ միշտ գիտցած է գտնել իր ներքին ջերմութեան աղբիւրը: Կարելի է անվարան հատաստել, այսուհանդերձ, թէ ժողովուրդին թալանուած պիղծ ոսկիէ փուճ մետալները չեն որ ճշմարիտ ջերմութեամբ պիտի ողողեն մեծատաղանդ արուեստագէտին սիրտը:

ՄԱՐԱՇԻ 1920-Ի ԶԱՐԴԸ

Մարումակուած էջ 14-էն

ժարանը, որ ծանօթ էր «Աքատեմի» անունով: Դպրոցներուն կողքին կային գանազան կրթական ու բարեսիրական ընկերութիւններ, ընթերցասիրաց եւ եկեղեցասիրաց, երիտասարդական միութիւններ, որոնք հիմնած էին գրադարան՝ 2300 գիրքով եւ ընթերցասրահ մը՝ զարկ տալու համար եկեղեցիներու պայծառութեան եւ հայ բնակչութեան կրթական ընդհանուր զարգացումին: Մարաշի մէջ կային նաեւ ազգային ու միսիոներական որբանոցներ՝ իրենց արհեստանոցներով, հիւանդանոց մը եւ այլիանոց մը:

«Լեզու եւ Սովորութիւնք» վերնագիրին տակ, հեղինակը ներկայացուցած է Մարաշի գաւառաբարբառով երգ մը, հանելուկներ, արձակ ուրիշ գրութիւններ եւ այլն, որոնցմէ իւրաքանչիւրին համար տրուած են գաւառաբարբառէն աշխարհաբար բացատրութիւններ: Ապա գեղեցիկ ձեւով կը նկարագրուին մարաշցիի կենցաղակերպն ու սովորութիւնները, տարազը, խօսքիկապի, հարսանիքի ծէսերը, հիւանդութեանց բուժման ժողովրդական միջոցները, թաղման ուղեկցող աւանդութիւնները:

Յովսէփ Տէր Վարդանեանի վաւերագրութեան ամէնէն կարեւոր ու հոգեպէս տառապեցնող մասը երրորդն է՝ «Վերջին Դէպքեր» (էջ 72-96) վերնագիրով: Զինարարէն ետք, անգլիական ու ապա փոխարինող ֆրանսական զօրքին ներկայութիւնը կը քաջալերէ Մարաշի հայերը վերադառնալու իրենց տունները, իսկ թուրք զանգուածը՝ գինուելու եւ կազմակերպուելու ֆրանսացիներուն եւ հայոց դէմ: Թրքական միլիտարիստները աստիճանաբար աշխուժացած էին՝ կեղրոն ունենալով Սեբաստիան եւ իրենց պարագլուխ՝ Մուսթաֆա Քեմալ փաշան (էջ 73): Ի տես թուրքերու այս եռանդուն աշխատանքին եւ զգալով հաւանական վտանգը, հայերը կը դիմեն ֆրանսական բանակի պատասխանատու սպային՝ ապահովութեան երաշխիքներ ստանալու: Մարաշ եկած 500 հայ կամաւորներու խումբը

Իսլահիէ կը դրկուի՝ «Ուսումնական թերթեր» պատրուակով: Ժխնելու Քէրէթ անպաշտպան հայոց կը վստահեցնէ, թէ «մենք քաղաքը եւ քրիստոնէայ բնակչութիւնը պաշտպանելու չափ գինուած ենք եւ աջակցութեան պէտք չունինք»: Այդուհանդերձ, կը պատահի անխուսափելի 21 Յունուարին կը սկսէր թուրք խուժանին յարձակումը՝ ոստիկաններու գլխավորութեամբ:

Յարձակումներ կ'ըլլան ֆրանսական գինուորական դիրքերու, հայոց բնակարաններուն եւ հաստատութիւններուն ու հիւանդանոցին վրայ: Անպաշտպան հայ ժողովուրդը կ'ողջակիզեն պատասխաններուն եւ եկեղեցիին մէջ:

11 Փետրուարին, ֆրանսական բանակը կը սկսի քաշուիլ քաղաքէն՝ ֆրանսացի գինուորներ եւ հայ բազմաթիւ նահատակներ իր ետին ձգելով: Երեք հազար հայեր մեծ

դժուարութեամբ կը հետեւին նահանջող զօրքին: Անոնցմէ 1200 հոգին ճամբան կը մահանան սաստիկ ցուրտէն, իսկ քաղաքը մնացողները «քեզ կառավարութեան կ'ուզեն» ըսելով կը տանին անվերադարձ: Ոմանք արկածախնդրօրէն փախուստի կը դիմեն: Անոնցմէ ազատուածները կը հասնին Սուրիա՝ Հալէպ, Դամասկոս, նաեւ՝ Պէյրութ եւ այլուր:

Օտարին պաշտպանութեան վստահած ու ապաւինած՝ ինքնապաշտպանութենէն զուրկ ժողովուրդին կեանքը կը վերածուի դժոխքի:

Գիրքին վերջնամասին մէջ կան Մարաշի եւ անոր կից գիւղերու բնակիչ հայոց, եկեղեցիներու եւ քահանաներու, ինչպէս նաեւ Մարաշի հայոց առաջնորդներուն եւ առաջնորդական փոխանորդներուն կամ տեղապահներուն ցուցակները: Գրքոյկին մէջ տպագրուած լուսանկարներէն բացի, վերջին էջերուն մէջ կան Մարաշի, անոր թաղամասերու, որբանոցի լուսանկարներ եւ Մարաշի քանի մը համայնապատկերներ: Մարաշի հայոց 1920-ի Յունուար-Փետրուարի ջարդէն քաղուելիք հիմնական դասն է՝ երեք չհաւատալ օտարի, նոյնիսկ ու յատկապէս ինքն իրեն հայոց դաշնակից ձեւացնողի երաշխիքներուն եւ ապաւինիլ միայն սեփական ոյժերուն ու միշտ պատրաստ ըլլալ որեւէ ժամանակ հաւանական նախայարձակմանը պատշաճ դիմադրութիւն ցոյց տալու: Խաղաղութիւն կ'ուզեն՝ միշտ պատրաստ պէտք է ըլլաս պատերազմի:

«Յաւէտ օրհնեալ լինիք դուք, որ նման երկով մը յաւերժական յուշարձան-կոթող մը կը կանգնէք հայ անմահ նահատակներու համար», կը գրէ Գեր. Եղիշէ Եպս. Զիլինկիլեան հեղինակին ձեռագիրը կարգալէ ետք (Ա. տպագրութիւն): Նոյնը կըրնանք ըսել 83 տարի ետք Հայկազ Մ. Հ. Միութեան վարչութեան համար, որ նախաձեռնեց այս գրքոյկին Բ. տպագրութիւնն ու գայն իրականութիւն դարձուց՝ նպատակ ունենալով «նոր սերունդը հաղորդակից դարձնել 1920 թուականի Մարաշի ջարդին զարհուրելի դէպքերուն, որպէսզի հայօրէն գոյատեւեն եւ դառնան մեր նահատակներուն արժանաւոր ժառանգորդները»: 21-րդ դարուն, հայ ներկայ ու ապագայ սերունդներուն համար արձակուած այս վաւերական յուշագրութիւնը մնացուն արժէք մըն է, ինչպէս որեւէ նման փաստավաւերագրութիւն: Իմ կարծիքով՝ ա՛լ աւելի լաւ կ'ըլլար երբ ան արժանանար արդի գիտական խմբագրման, խնամուած ծանօթագրման եւ աւարտին ունենար անձնանուններու եւ տեղանուններու ցանկեր, հին պատկերներուն վրայ աւելնալին նորերը, ինչպէս նաեւ նիւթին առնչուած դիւանական փաստաթուղթեր, յատկապէս՝ անտիպներ, որոնք վստահօրէն տեղ մը կը հանգչին մարաշցի հայոց ընտանիքներու հաւաքածոներուն մէջ:

Վարձքերնիդ կատա՛ր, դէպի նոր իրագործումներ:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Գէորգ Թաւուզճեան եւ Թադէոս Քէօրողլեան կը շնորհաւորեն իրենց ուսուցիչի ԵՐՈՒԱՆԻ ՊԱՊԱՅԵԱՆԻ պարգեւատրման եւ գրքի շնորհանդէսի ուրախ աւիթով:
Առ այդ 50-ական տուրք կը նուիրեն «Մասիս»ին:

ՕՊԱՄԱՅԻ ԹԱՏԵՐԱԽԱՂԻ Բ ԱՐԱՐԸ

Շարունակում է 1-ին

տական ժողովրդային եւ Ազգայնական կուսակցութիւններու անդամ երեսփոխաններ առաջարկած են խիստ ձեւերով հակազդել ԱՄՆ-ի ներկայացուցչական տան Արտաֆին յարաբերութիւններու յանձնարարութեան ընդունումը: Անոնք առաջարկած են Խորհրդարանի սեղանէն վերցնել Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները: Փակել Ինքնիշխան մարտերի կամուրջը: Փակել Ինքնիշխան մարտերի կամուրջը: Անորէն կերպով Թուրքիա հաստատում հայերը հեռացնել թուրքիայէն:

Այստեղ է որ կը բացուի Օպամայի ինքնարդարացման ծառայող բատերախաղի Բ արարը, Ուաշինկթընի մէջ, կրկին, յառաջիկայ Ապրիլի կէսերուն: ԱՄՆ-ի Արտաֆին գործոց մատարար Հիլլըրի Գլինթընի՝ ԱՄՆ-ի նախագահ Պարաօպամայի կողմէ տրուած հրաւեր նամակը փոխանցած է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին:

Այդ բուսակցութիւններուն՝ Ուաշինկթընի մէջ տեղի պիտի ունենայ Արտամայի Անվտանգութեան Համաշխարհային Գագաթաժողով: Այդ առիթով կ'ակնկալուի որ նախագահներ Պարաօպամա եւ Սերժ Սարգսեան ունենան հանդիպում մը միասին քննարկելու համար տարածաշրջանային միջազգային օրակարգի վրայ գտնուող հարցեր: Իսկ թուրքիայ վարչապետ Ռեջեփ Էրտողան կ'արձագանգէ իրեն տրուած Ուաշինկթընի հրաւերին, բայց քննադատումը ծրագրուած չի գտնել տակալին: Այս «Ձեմու չեմը» լուրերը իր պատմադրամաշինը կը գտնէ Անգարայի՝ Ուաշինկթընի դեսպան Նամրթիմի ետ պաշտօնին վերադառնալու Անգարայի նախապատման մէջ, որ կը բնութագրուի հետեւեալ կերպով: Անգարա գրաւոր երաշխիքներ կը պահանջէ այն կապակցութեամբ, որ ԱՄՆ-ի ներկայացուցչական ժողովի Արտաֆին յարաբերութեանց յանձնարարութիւնը 252 բանաձեւը պիտի չընդգրկուի ներկայացուցչներու ժողովի օրակարգին վրայ:

Ներկայ պայմանները եթէ արուեստականօրէն ստեղծուեցան պարզապէս արդարացնելու համար՝ նախագահ Պարաօպամայի 8-նոս պատմութիւնը բառը չ'արտասանելու դիտարարութիւնը՝ զանազան կան բեմադրութիւն մը ըլլալէ չեն դադարի: Մենք վարժութիւնն ունինք ԱՄՆի ներկայացուցչական տուններու Արտաֆին յարաբերութիւններու յանձնարարութիւնը՝ հայոց դէմ գործադրուած Ցեղասպանութեան ինպաստ փութարկած բանաձեւերուն: Անոնք կոչուած են մնալու յանձնարարութիւնը փոշեբարախարիսներուն մէջ: Այս անգամ եւս, պիտի աւելնայ մեր փորձառութեան թիւը պարզապէս: Բայց մեր ցար կը կայանայ անոր մէջ, որ հայազգի դէմ կատարուած Ցեղասպանութիւնը օտարներու համար կը ծառայէ պետական շահերու օգտին մտնուած դրամագլուխ, իսկ մեր ազգի համար՝ ֆաղակալանօրէն տարբադարման եղբարական միջոց, երեսոյթ՝ որ տակալ շեշտուեցաւ մեր նորակալի հանրապետութեան վերջին տասնամակին, Արարապուրկէն մինչեւ Երեւան-Անգարա Զուրպուլայի մրցոյթները, վերջապէս Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ համաձայնագրերու ստորագրութիւնը:

Տարակոյս չկայ, որ թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրտողան պիտի արձագանգէ իրեն տրուած Ուաշինկթընի հրաւերին: Ան պիտի միանայ Օպամա-Սարգսեան երկեակի այսպէս բնութագրուած «տարածաշրջանային միջազգային օրակարգի վրայ գտնուող հարցերու» քննարկման ժողովին: Վստահ, Թուրքիոյ ձեռքներուն մէջ պիտի ըլլան շոշափելի, բազմաբնոյթ, ճանրակշիռ՝ հայոց աշխարհի աւանդներին բաժին սահմանելով միայն Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու բարելաման անշեշտ երազի փայփայանք:

ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԶԱՅԵՐՆ ԱԲԵԼԻ ԶՈՒՍՊ ԵՆ

Շարունակում է 6-էն

են բարոյահոգեբանական մթնոլորտ ձեւաւորում եւ այլն: Այսինքն՝ մենք չենք կարող ստել, որ հարիւր տոկոսով չեն կարող անդրադառնալ թուրքական իշխանութեան կողմից հայերի նկատմամբ վերաբերմունքի վրայ: Բայց ծայրայեղ ազդեցութիւններ չկան, առաւել էլ եւս, որ թուրքական ԶԼՄ-ներն են նախանձախնդրութիւն դրսևորում՝ երկրի հայերին այդ ազդեցութիւններինց գերծ պահելու համար, եւ փորձում են թուրքիայում ու արտերկրում ապրող հայերի միջեւ զանազանութիւն մտցնել՝ մի փոքր աւելի ուշադրութիւն եւ նրբանկատութիւն դրսևորելով թուրքիայում ապրող հայերի նկատմամբ»:

Պարոն Գոչունեանը դժուարացաւ ասել, թէ վերջին զարգացումներն ինչպէ՞ս կարող են ազդել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի, արձանագրութիւնների վաւերացման վրայ: «Նախ՝ չգիտեմ, թէ արձանագրութիւնների վաւերացման գործընթացը ի՞նչ հանգամանքներով է պայմանաւորուած,

որովհետեւ մի դէպքում դա պայմանաւորում է զարաբաղեան հարցով, մէկ այլ դէպքում՝ հայ-թուրքական յարաբերութիւնների երանգներով: Ըստ երեւոյթին, թուրքական կողմի մօտ այնքան էլ մեծ ցանկութիւն չկայ այդ արձանագրութիւնները վաւերացնելու ուղղութեամբ, բայց թէ քաղաքական մթնոլորտը, իրադարձութիւնների զարգացումը ինչպէս կ'ազդեն այդ գործընթացների վրայ՝ դժուար է ասել, եւ հարիւր տոկոսով կանխատեսել չի կարելի», - ասաց «Ժամանակ» թերթի խմբագիրը: Այսինքն՝ հնարաւոր է, որ դա որեւէ կերպ նաեւ չազդի՞ այդ պրոցէսների վրայ: «Այդպէս էլ չեմ կարծում: Թուրք մեկնաբանները արձանագրութիւնները թուրքիայի ձեռքում շատ ամուր խաղաքարտ են համարում՝ արտասահմանում նման ճանաչումների շարքը կանխելու համար: Բայց հիմա ինչդիրն այն է, թէ այդ խաղաքարտը որքա՞ն ժամանակ արդիւնաւէտութեամբ կ'օգտագործուի: Դա աւելի ընդհանրական մեկնաբանութիւնների նիւթ է», - եզրափակեց Արա Գոչունեանը:

ՈՐ ՏԱՐԱԾԲԸ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏԱԿ

Շարունակում է 6-էն

Թիւնն ու ձեւականութիւնը, ուրեմն դա չեն նկատում նաեւ արտերկրում, որտեղ հունցում են Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման տարբերակներ ու մատուցում են կողմերին: Մինչդեռ ջայլամային այդ մտտեցումը բացարձակ ինքնախաբէութիւն է, որը հասցրել է այնտեղ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսացի համանախագահ Բեռնար Ֆասիեն Երե-

ւանում բացէ-բաց յայտարարում է, որ համանախագահները Ղարաբաղի համար առաջարկում են միջանկեալ կարգավիճակ, մինչեւ բոլոր մնացած հարցերը կ'լուծուեն, ու նոր կ'անդրադառնան Ղարաբաղի կարգավիճակին: Իսկ դա մօտաւորապէս այն է, երբ շէնքի դռներն ու պատուհանները դրոււմ են, չետոյ նոր սկսում են պատերը շարել, իսկ վերջում էլ պատրաստում են շէնքի նախագիծը:

ԹԵՂԵԿԻ «ԱՍԵՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑ» ՆԵՐԵՆ

Շարունակում է 14-էն

արժէքը, երբ շեշտուած բացականերու աշխատակցութիւններու գրկումով, կը յաջողի վերականգնել իր խմբագրած տարեցոյցին մտաւորական-գրական կոթողը:

Հին բաժինները ներկայ են «հայ գեղարուեստ», նկարչական, թատերական, երաժշտական արժէքներու, երեւոյթներու եւ ձեռնարկներու անդրադարձումով եւ արձագանգով, ինչ որ հայ արուեստի պատմութեան համար էական կը մնան: «Թէոդիկի Տարեցոյց» ներքինը «Հայ կեանքը Երէկ եւ Այսօր» բաժինը եթէ նախորդ տարեցոյցներուն մէջ հայ կեանքի երկէն եւ այսօրէն անցքեր, դէպքեր, դէմքեր լրջի կը բերուէին, պատմական փաստաթուղթեր կը հրատարակուէին, «Ամէնուն Տարեցոյց» ի աչս հատորը առաւելաբար Մեծ Եղեռնին առնչուած դէպքերուն, նկարագրութիւններուն նուիրում է: Այդ էջերուն մէջ մասնաւորաբար հայանպաստ դերեր կատարած եւ հայ դատին իրենց նպաստը բերած դէմքերու մասին անդրադարձները արժէքաւոր վկայութիւններ են: Անոնցմէ յատկապէս «Ալլիոնի անմահ գաւակը», «Մեծին Բրիտանիոյ պարծանք» վեհաշուք եւ անգուղական քաղա-

քագէտին՝ Մսթըր Կլէտսթընի նուիրում գնահատանքի տողերն են»:

Եղեռնի նուիրումը գրականութեան կարեւոր աղբիւր է Թէոդիկի 1916-1920, Ժ.-ԺԴ. տարի «Ամէնուն Տարեցոյցը» որուն մէջ «Բանտի եւ աքսորի տարիներ» իր գրութիւնը սրտածմլիկ տեսարաններ, պահեր, ապրումներ գրական ոճով սեւեռելէ զատ, բանտի եւ աքսորի պայմաններէն դրուագներ եւ դէմքերու հետ հանդիպումներ եւ խօսակցութիւններ կենդանի վկայութիւններ են: Անոնց շարքին կը գտնուին Փարամազ, Ալըքաշեան, Տոբթ. Պէննէ, Գեղամ Վանիկեան, Հրանդ Եկաւեան, Երուանդ Թօփուզեան (Բանուոր): 1915 Յունիս 15-ին Սուլթան Պայազիտի մէջ կախուածները:

Ա. հանրապետութեան կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի սպուած մէկ նամակը Թէոդիկի վերաբերեալ կը հաստատէ նախարարին ունեցած ակնածանքն ու համարումը զայն Հայաստանի հանրային գրադարանի կապելու. «Ես կողմնակից եմ արեւմտահայ ուժերին երկիր հաւաքելու» սկզբունքով:

Թէոդիկի տարեցոյցներուն մէջ «1916-1920, Ժ.-ԺԴ.»-ը հոյակապ իրագործում մըն է, լուրջ ուսումնասիրութեան արժանի:

ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ
ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ ցաւալի մահուան առիթով մեր վշտակցութիւնները կը յայտնենք այրիին, գաւակներուն, ի մասնաւորի Տէր եւ Տիկ. Սեդա եւ Վազգէն Խոտանեաններուն:
Հանգուցեալի յիշատակին Յովհաննէս Բալայեան 30 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:


ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

INVITATION FOR BIDS
IFB NO. 1692
THE BUILD BACK FOR THE
RENOVATION OF HACLA
HEADQUARTERS
(A FIVE-STORY
OFFICE BUILDING)
The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the build back for the renovation of HACLA headquarters (a five-story office building) located at 2600 Wilshire Boulevard, Los Angeles, CA 90057. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Boulevard, 3rd floor, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m. (local time), March 31, 2010.
3/18, 3/25/10
CNS-1813636#
MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս»
Շարաքաթերքին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱՆՆԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ

Չափազանց կարևոր է թերթիկը հետ ուղարկել, քանի որ
դրանից կարող է կախված լինել յուրաքանչյուրիս ապագան:



2010 թվականի մարդահամարի թերթիկը լրացնելով և ետ ուղարկելով՝ մենք համայնքային ծրագրերի իրագործման հնարավորություն ենք ստեղծում: Մասնակցելով 2010 թվականի մարդահամարին, մենք կարող ենք ստանալ մեր մասնաբաժինը համայնքային բարելավման պետական ծրագրով նախատեսվող 400 միլիարդ դոլլարից: Ուրե՛մա լրացնենք և հետ ուղարկենք մարդահամարի թերթիկը: Ապագան մեր ձեռքերում է: Լեզվական աջակցության համար այցելե՛ք 2010census.gov

ՄԱՍՆԱԿՑԵԼՈՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ՝
ՉՆԱՎՈՐԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՑԱՆԿԱԼԻ ՈՐԱԿԸ:

United States
**Census
2010**

ԱՄՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ-2010

ԱՅՆ ՄԵՐ ՉԵՌՔՈՒՄ Է